ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՀԱՂՈՐԴՈՒՄ

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
1. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
1.1 Բարեվարքության համակարգի ամրապնդմանն ուղղված՝ հաշվետու տարում իրականացված աշխատանքները
1.2 Բարեվարքության համակարգի տարրերին առնչվող դեպքերի քննությունները
1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը
1.3.1 Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների տեղայնացմանը և ոլորտային կանոնագրքերի մշակմանն աջակցություն
1.3.2 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի կիրառում
1.4 Անհամատեղելիության պահանջների պահպանումը
1.4.1 Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում
1.4.2. Այլ սահմանափակումներ. հետաշխատանքային սահմանափակումների խախտման համար պատասխանատվության կառուցակարգերի բացակայությունը
1.4.3 Անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների հետևանքների անհստակությունը
1.5 Շահերի բախման վերաբերյալ քննություններ
1.6 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը
1.7 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարում
2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ
2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում և հայտարարագրերի ներկայացման գործընթաց
2.2 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ
2.3 Աջակցություն հայտարարատուներին
3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3.1 Հայտարարագրերի ստուգում
3.2 Հայտարարագրերի վերլուծություն
4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ
4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ
4.3 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

4.3.1 Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներ
4.3.2 Պետական ֆինանսավորման ոչ ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներ
4.4 Կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում
4.5 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների և ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի ներկայացման գործընթաց
4.6 Նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների նախապատրաստում և հրապարակում
5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ
5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ
5.2 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ
5.3 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի արդյունքում ներկայացված եզրակացությունների հիման վրա ներկայացված հաղորդումներ և զեկուցագրեր
6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ
7. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ
8.1 Հակակոռուպցիոն կրթություն
8.2 Հանրային իրազեկվածության բարձրացում, հաղորդակցություն
9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ
9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ
9.2 Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ
10 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
11 ԱՄՓՈՓՈՒՄ

## *ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով կամ ԿԿՀ) ամփոփում է 2025 թվականի գործունեությունը՝ միտված հակակոռուպցիոն քաղաքականության կանխարգելիչ բաղադրիչի գործնական կիրառման ապահովմանը: Փաստաթղթի կառուցվածքը բխում է Հանձնաժողովի մանդատից և ընդգրկում է Հանձնաժողովի գործառութային ուղղություններով արձանագրված ցուցանիշները, վիճակագրական տվյալները և ոլորտային մարտահրավերները:

Հաղորդման առանձին գլուխներով անդրադարձ է կատարվում բարեվարքության համակարգի կայացմանը և հանրային ծառայության մեջ դրա ամրապնդմանը, հայտարարագրման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և հայտարարատուների համար գործիքակազմի դյուրացմանը, հայտարարագրերի վերլուծության արդյունքներին, ինչպես նաև կուսակցության ֆինանսական վերահսկողությանն առնչվող տվյալներին: Մանրամասն ներկայացված են բարեվարքության ուսումնասիրության գործիքի միջոցով բարեվարքության տեսանկյունից ռիսկային անձանց մուտքը պետական համակարգ կանխելուն ուղղված քայլերը,կոռուպցիոն ռիսկերի գնահատման ինստիտուտի ներդրման առնչությամբ նախապատրաստական աշխատանքները,հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման միջոցառումները, Հանձնաժողովի մանդատի թվայնացման գործընթացը, ինչպես նաև միջազգային համագործակցության շրջանակները:

Հաղորդումը նպատակ ունի տրամադրել համապարփակ տեղեկատվություն կանխարգելիչ հակակոռուպցիոն մեխանիզմների կիրառման արդյունավետության վերաբերյալ և հիմք հանդիսանալ ոլորտի հետագա զարգացման ռազմավարական պլանավորման համար:

# 1. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

## *1.1 Բարեվարքության համակարգի ամրապնդմանն ուղղված՝ հաշվետու տարում իրականացված աշխատանքները*

Բարեվարքության համակարգի տարրերի պահպանմանը հետևելը Հանձնաժողովի առանցքային գործառույթներից է, և հաշվետու տարում շարունակվել են այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ընդհանուր առմամբ՝ պահպանվել է բարեվարքության համակարգի տարրերին առնչվող՝ հանրային իշխանության մարմիններից և քաղաքացիներից ստացվող դիմումների, ինչպես նաև վերաբերելի մեդիա հրապարակումների թվի աճի միտումը, արդյունքում նաև՝ դրանց հիման վրա իրականացված ուսումնասիրությունների թվի աճը: Բացի ուսումնասիրությունների թվի աճից, ինչի արդյունքում Հանձնաժողովը գործնականում հնարավորություն է ունեցել քննելու բարեվարքության համակարգի տարրերին առնչվող իրավախախտումները և իրավասու մարմիններին ներկայացնելու դրանց լուծմանն ուղղված առաջարկներ, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ապահովել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին խորհրդատվությունների տրամադրումը՝ կապված շահերի բախման իրավիճակների լուծման, ինչպես նաև նվերների հաշվառման գործընթացի կազմակերպման հետ, որոնց թիվն էապես աճել է՝ ի համեմատություն նախորդ տարվա: Մասնավորապես՝

- Հանձնաժողովը 2025 թվականին շարունակել է վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում հանրային իշխանության մարմիններին աջակցության տրամադրումը, ոլորտային կանոնագրքերի դիտարկումը, առաջարկների ներկայացումը, ինչպես նաև կանոնագրքերի մշակմանն ուղղված քննարկումներին մասնակցությունը:
- Իրականացվել է բարեվարքության համակարգի տարրերի ենթադրյալ խախտումների ուսումնասիրությունների և քննության ընթացքում արձանագրված ընթացակարգային օրենսդրական խնդիրների գույքագրում, որի արդյունքները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարությանը՝ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնման նպատակով:
- Իրականացվել է մշտադիտարկում ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և վերջիններիս տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի,

փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները զբաղեցնող անձանց շրջանում (ընդհանուր՝ 114 պաշտոնատար անձ)՝ անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կարգավորումների պահպանման ստուգման նպատակով:

- Հանձնաժողովը շարունակել է իրականացնել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման գործընթացը, որի արդյունքում հավաքագրվել և ամփոփվել է 2025 թվականի՝ բարեվարքության համակարգի տարրերի խախտումներին առնչվող՝ հանրային իշխանության մարմինների վիճակագրությունը:
- Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է հանրային իշխանության մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչներին բարեվարքության համակարգին առնչվող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրումը:
- Զուգահեռաբար իրականացվել են բարեվարքության համակարգի և Հանձնաժողովի գործունեության ոլորտների վերաբերյալ վերապատրաստումները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար:
- Գործարկվել է հակակոռուպցիոն կրթության էլեկտրոնային հարթակը և ներդրվել են հակակոռուպցիոն թվային առաջին դասընթացները, որոնք հասանելի են հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց:

### *1.2 Բարեվարքության համակարգի տարրերին առնչվող դեպքերի քննությունները*

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում հետևում է հանրային մի շարք պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների պահպանմանը, ինչպես նաև քննում համապատասխան իրավախախտումներին առնչվող դեպքերը: Վերոգրյալից ելնելով՝ 2025 թվականի ընթացքում բարեվարքության համակարգի տարրերի (անհամատեղելիության պահանջներ, շահերի բախում, վարքագծի կանոններ, նվերների ընդունման սահմանափակումներ, այլ սահմանափակումներ) առնչությամբ դիմումների և մեդիա հրապարակումների հիման վրա Հանձնաժողովում իրականացվել է ընդհանուր թվով **245** ուսումնասիրություն, որից՝ **43**-ը մեդիա հրապարակումների, **191**-ը՝ դիմումների (դրանցից 2-ը՝ նաև մեդիա հրապարակման), **4**-ը՝ ազդարարման, ևս **7**-ը՝ Հանձնաժողովում իրականացվող այլ գործընթացների (դրանցից 1-ը՝ նաև մեդիա հրապարակման) շրջանակներում արձանագրված առերևույթ խախտումների հիման վրա: Ընդ որում, նախորդ տարի 2023 թվականի համեմատությամբ արձանագրվել էր ուսումնասիրությունների ընդհանուր թվի կրկնակի աճ: Հատկանշական է, որ 2025 թվականին

ևս տվյալ միտումը պահպանվել է, և ուսումնասիրությունների ընդհանուր քանակը 2 անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ **120-ից հասնելով 245**-ի: Բացի դրանից՝ աճել են նաև դեպքերը, երբ պաշտոնատար անձինք, նախքան համապատասխան գործողության կատարումը կամ որոշման ընդունումը, Հանձնաժողովից հայցել են խորհրդատվություն: **31** դեպքում քաղաքացիների, պաշտոնատար անձանց և զանգվածային լրատվության միջոցների հարցումներին ի պատասխան տրամադրվել են պարզաբանումներ, մեկնաբանություններ, նվերների արժեքի որոշման հարցում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ցուցաբերվել է աջակցություն:

2025 թվականին իրականացված՝ վերը նշված 245 ուսումնասիրություններից 108-ը վերաբերել են շահերի բախման իրավիճակներին, անհամատեղելիության պահանջների




վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների թիվը կազմել է 39-ը, վարքագծի կանոնների վերաբերյալ ուսումնասիրությունները եղել են 42-ը, նվերների ընդունման սահմանափակումների վերաբերյալ՝ 38-ը, այլ սահմանափակումների վերաբերյալ՝ 10-ը, ևս 8-ը՝ այլ հարցերի վերաբերյալ: Բացառությամբ անհամատեղելիության պահանջների վերաբերյալ ուսումնասիրությունների՝ մնացած դեպքերով ուսումնասիրությունների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 50 և ավելի տոկոսով:

Նախորդ տարվա համեմատ էապես (70.1 %-ով) աճել է նաև Հանձնաժողով հասցեագրվող դիմումների թիվը, այնինչ մեդիա հրապարակումների թիվը որոշակիորեն նվազել է: Ընդ որում, ուսումնասիրված հրապարակումներից **25**-ը վերաբերել են շահերի բախման իրավիճակներին,

19-ը՝ վարքագծի կանոններին, 1-ը՝ անհամատեղելիության պահանջներին և 1-ը՝ այլ սահմանափակումներին:

Ինչ վերաբերում է այլ գերատեսչություններից ստացված գրություններին և քաղաքացիներից ստացված դիմումներին՝ **82** դեպքում դրանք վերաբերել են շահերի բախման իրավիճակներին, 38-ը՝ նվերների ընդունման սահմանափակումներին, 34-ը՝ անհամատեղելիության պահանջներին, 25-ը՝ վարքագծի կանոններին, 4-ը՝ այլ սահմանափակումներին: Եվս 8 դեպքում ուսումնասիրության առարկան վերաբերել է այլ հարցերի:

Այսպիսով՝ հաշվետու տարում շահերի բախմանն առնչվող դեպքերը գերակայել են և մեդիա հրապարակումների, և դիմումների ու գրությունների պարագայում:

Ընդհանուր առմամբ, ներկայացված համեմատական տվյալները և հաշվետու տարում ստացված դիմումների բովանդակությունը վկայում են Հանձնաժողովի գործունեության և Հանձնաժողովի լիազորությունների վերաբերյալ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացման մասին:

## *1.3 ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ և ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

### *1.3.1 Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների տեղայնացմանը և վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակմանն աջակցություն*

Հանձնաժողովը դեռևս 2022 թվականին, իր լիազորությունների իրացման շրջանակներում, հաստատել է Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, իսկ 2023 թվականին՝ Տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցը[1] և Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը[2]:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հաստատված Տիպային կանոնները հիմք են հանրային ծառայության առանձին տեսակների համար վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման համար:

[1] Հասանելի՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2024/12/Int-Manual-to-Model-COC-of-Public-Servants_03.12.2024_final.pdf

[2] Հասանելի՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/05/%D5%88%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf

Վերոգրյալի համատեքստում՝ 2025 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է աջակցություն տրամադրել պետական մարմիններին ոլորտային կանոնագրքերի մշակման հարցում՝ ստուգելով դրանց համապատասխանությունը Տիպային կանոններին և Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման ուղեցույցի պահանջներին:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովը դիրքորոշում է ներկայացրել **Ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողի, Քրեակատարողական ծառայողների, Պրոբացիայի ծառայության ծառայողների վարքագծի, Էկոպարեկային ծառայողների, Զինծառայողների վարքագծի կանոնագրքերի** նախագծերի վերաբերյալ: Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված նախագծերով հիմնականում պահպանվել են ոլորտային կանոնագրքերի մշակմանը ներկայացվող պահանջները, միաժամանակ, առաջարկել առանձին շտկումներ՝ Տիպային կանոններին նախագծերով սահմանվող կանոնների համապատասխանությունն ապահովելու նպատակով: Որպես դրական զարգացում հարկ է նկատել, որ նշված դեպքերում համապատասխան պետական մարմինները մեծամասամբ իրացրել են Հանձնաժողովի ներկայացրած առաջարկները:

Հանձնաժողովը դրական է գնահատել այն հանգամանքը, որ հաշվետու տարում ընդունվել են ոստիկանության, էկոպարեկային, քրեակատարողական ծառայողների վարքագծի կանոնները, իսկ պրոբացիայի ծառայողների վարքագծի կանոնները վերանայվել են և համապատասխանեցվել Տիպային կանոններին:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովն ընդգծում է, որ Տիպային կանոնների ընդունումից գրեթե երեք տարի անց **դեռևս չեն ընդունվել համայնքային վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, արտաքին հետախուզության ծառայության և Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայողների վարքագծի կանոնները, իսկ դիվանագետի էթիկայի կանոնները և քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները էականորեն տարբերվում և, որոշ դեպքերում, անգամ հակասում են Տիպային կանոններին՝ ինչպես կառուցվածքի, այնպես էլ բովանդակության տեսանկյունից:** Բացի այդ, չեն ընդունվել նաև Ազգային ժողովի պատգամավորների և համայնքների ավագանու անդամների վարքագծի կանոնագրքերը, ընդ որում, ավագանու անդամների պարագայում նաև առկա չէ նրանց նկատմամբ կիրառելի վարքագծի կանոնագիրք ընդունելու լիազորող նորմ: Այս խնդիրը Հանձնաժողովի կողմից շարունակաբար արձանագրվել է նախորդ տարիների տարեկան հաղորդումներում, սակայն մինչ օրս չի ստացել պատշաճ լուծում: Հանձնաժողովն ընդգծում է նաև նորաստեղծ տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայողների վարքագծի կանոնագրքի մշակման և ընդունման անհրաժեշտությունը:

Հանձնաժողովը նաև մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ դատական կարգադրիչների վարքագծի կանոնների նախագիծը ներկայացված չի եղել Հանձնաժողովի

կարծիքին,ինչպես նախատեսված է Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման ուղեցույցով սահմանված ընթացակարգով, ինչի պայմաններում Հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատել ոլորտային կանոնների՝ Տիպային կանոնների հետ համապատասխանությունը: Հանձնաժողովը գտնում է, որ նման տարանջատված մոտեցումները որոշակի խոչընդոտներ են ստեղծում հանրային ծառայության տարբեր տեսակներում վարքագծի կանոնների միասնական մեկնաբանման և կիրարկման տեսանկյունից:

Անդրադառնալով Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայողների վարքագծի կանոնների բացակայությանը՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ տվյալ ծառայության տեսակի դեպքում առհասարակ թերի են կարգավորված բարեվարքության համակարգի բոլոր տարրերին առնչվող իրավահարաբերությունները: Այսպես, ծառայության նշված տեսակը սահմանված չէ «Հանրային ծառայության մասին» օրենքում, ինչի արդյունքում՝ դրա նկատմամբ կիրառելի չեն օրենքով սահմանված՝ բարեվարքության համակարգի տարրերին վերաբերելի իրավակարգավորումները, իսկ «Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքով միայն մասնակիորեն, ոչ ամբողջական կերպով նախատեսված են անհամատեղելիության պահանջները և որոշ այլ սահմանափակումներ, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումը, իսկ վարքագծի կանոնները և շահերի բախման իրավիճակներն առհասարակ որևէ կերպ կարգավորված չեն:

Հանձնաժողովը վերահաստատում է նախորդող տարիներին արտահայտած դիրքորոշումն առ այն, որ խնդրահարույց է որոշ պաշտոնների դեպքում օրենսդրությամբ վարքագծի կանոնների սահմանման լիազորող նորմերի բացակայությունը: Հատկապես խնդրահարույց է համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ավագանու անդամների, և Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների բացակայությունը, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից երբևէ պատգամավորական էթիկայի կանոնների ենթադրյալ խախտումների կապակցությամբ էթիկայի հանձնաժողով չձևավորելու պրակտիկան:

Հանձնաժողովը, որպես բարեվարքության համակարգի միասնականությանը հետևելու մանդատով օժտված պետական մարմին, շարունակում է խնդրահարույց համարել հատկապես Ազգային ժողովի պատգամավորների և համայնքի ավագանու անդամների վարքականոնների բացակայությունը, հատկապես այն պայմաններում, երբ Ազգային ժողովի, և ավագանու նիստերը հրապարակային են, և հաճախ քաղաքական խոսքի թույլատրելի սահմաններից դուրս խոսելառճը հանգեցնում է հանրության մոտ հանրային ծառայության վերաբերյալ բացասական ընկալման, մինչդեռ նման դեպքերը, կանոնների բացակայությամբ պայմանավորված, չեն արժանանում պատշաճ գնահատականի: Ինչպես 2024 թվականին, հաշվետու տարվա ընթացքում ևս Հանձնաժողովը Վարքագծի կանոնագրքի դրույթների

ենթադրյալ խախտման համատեքստում դիտարկել է ավագանու անդամների կամ պատգամավորների հետ փոխհարաբերությունների շրջանակներում Վարքագծի կանոնագրքի սուբյեկտ հանդիսացող անձանց վարքագիծը՝ զրկված լինելով ավագանու անդամների կամ պատգամավորների վարքագիծը քննարկելու կամ գնահատելու հնարավորությունից: Ավելին, ավագանու անդամների պարագայում անգամ առկա չէ վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումները քննելու իրավասու մարմին, որին Հանձնաժողովը նման դեպքերում կկարողանար դիմել: **Արդյունքում՝ համայնքի ղեկավարների, նրանց տեղակալների, կառավարության անդամների, ինքնավար կամ վարչական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը ստանում է համապատասխան գնահատական, այն դեպքում, երբ ավագանու անդամների ու պատգամավորների նույնաբնույթ վարքագիծը չի դառնում քննության առարկա:**

Հարկ է նշել, որ պատգամավորների վարքագծի կանոնների մշակման անհրաժեշտության վրա ուշադրություն է հրավիրել նաև Եվրոպայի Խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (GRECO): Հայաստանի վերաբերյալ գնահատման չորրորդ փուլի երկրորդ՝ միջանկյալ համապատասխանության զեկույցում արձանագրվել է պատգամավորների վարքագծի կանոնագիրք մշակելու և ընդունելու հրատապությունը: Սակայն, այդ պահանջը շարունակում է մնալ իրագործման փուլում:

Վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և դրանց կիրարկման միասնականության ապահովման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ, որի գործողությունների ծրագրով նախատեսվել են դատավորների և դատախազների գործող վարքագծի կանոնների համապատասխանեցումը Տիպային կանոններին, համայնքի ավագանու, վարչական շրջանի ղեկավարների և համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների սահմանումը: Թեև որպես նշված գործողությունների կատարման վերջնաժամկետ նախատեսվել է 2024 թվականի երկրորդ կիսամյակը, այնուամենայնիվ, ինչպես 2024 թվականին, այնպես էլ հաշվետու տարվա ընթացքում դրանք չեն կատարվել:

Այսպես, 2025 թվականի ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը շրջանառել է ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով, ի թիվս այլնի, առաջարկվում է նախատեսել համայնքների ավագանիների լիազորությունը՝ սահմանելու համայնքի ավագանու անդամի վարքագծի կանոնները:

Վերոնշյալ նախագծի վերաբերյալ ներկայացված դիրքորոշմամբ Հանձնաժողովը, ի թիվս այլնի, խնդրահարույց է համարել այն հանգամանքը, որ նախագծով չեն նախատեսվում ավագանու անդամների վարքագծի կանոնների խախտումների քննության ընթացակարգեր, չի հստակեցվում քննող մարմինը, այդ թվում՝ որևէ կերպ չեն կարգավորվում էթիկայի

հանձնաժողովի ձևավորման և գործունեության հետ կապված հարցերը, չեն նախատեսվում պատասխանատվության կառուցակարգերը՝ առաջարկելով հասցեագրել նշված բացերը: Բացի այդ, խնդրահարույց է, որ նախագծով չի նախատեսվում համայնքային վարչական և հայեցողական պաշտոն անձանց վարքագծի կանոնների սահմանման լիազորող նորմ:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը վերստին արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

- ընդունել Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնները և ապահովել դրանց կիրառման ամբողջական դաշտը՝ այդ թվում էթիկայի հանձնաժողովի ձևավորման և գործունեության համապարփակ կանոնակարգումները,
- սահմանել ավագանիների լիազորությունը՝ ընդունելու ավագանու անդամների վարքագծի կանոնները, ինչպես նաև նախատեսել ավագանու անդամների վարքագծի կանոնների խախտումների քննության ընթացակարգեր՝ հստակեցնել խախտումները քննող մարմինը և պատասխանատվության կառուցակարգերը,
- ընդունել Արտաքին հետախուզության ծառայության ծառայողների և տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայողների վարքագծի կանոնագրքեր՝ ոլորտային առանձնահատկությունների հաշվառմամբ, ինչպես նաև օրենսդրական հիմքեր ստեղծել համայնքային վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ Վարքագծի կանոնագրքի կիրառման համար,
- դիվանագիտական ծառայողների և քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները համապատասխանեցնել Տիպային կանոններին՝ Հանձնաժողովի հետ խորհրդակցությունների միջոցով, ինչպես նաև Հանձնաժողովի կարծիքին ներկայացնել դատական կարգադրիչների վարքագծի կանոնագիրքը,
- կատարել օրենսդրական փոփոխություններ՝ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայողների նկատմամբ կիրառելի դարձնելով բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթները կամ նախատեսել նույնական դրույթներ «Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում, ինչպես նաև ընդունել Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայողների վարքագծի կանոնագիրք:

### *1.3.2 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի կիրառում*

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին վերապահված են հանրային մի շարք պաշտոններ զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքն ընդունելու և դրանով նախատեսված վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումների դեպքերը քննելու լիազորությունները:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունել է

Վարքագծի կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 1-ից: Կանոնագիրքը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հայերեն և անգլերեն տարբերակներով, ինչպես նաև իրավական տեղեկատվական arlis համակարգում:

Հաշվետու տարում Հանձնաժողովն իրականացրել է վարքագծի կանոնների խախտմանը վերաբերելի 42 ուսումնասիրություն, որից 16-ը՝ մեդիա հրապարակման, 23-ը՝ դիմումի, 2-ը՝ միաժամանակ դիմումի և մեդիա հրապարակման, ևս 1-ը՝ մեդիա հրապարակման և մեկ այլ վարույթի իրականացման ընթացքում առերևույթ խախտման հայտնաբերման հիման վրա (նշված երեք դրվագները ներկայացվում են առանձին՝ նկատի ունենալով, որ դրանց վերաբերյալ ուսումնասիրությունները կատարվել են միաժամանակ երկու հիմքով): Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը նաև ստացել է Վարքագծի կանոնագրքի մեկնաբանության և դրա հնարավոր խախտումների դեպքերի քննության ընթացքի վերաբերյալ 14 հարցում:

Հաշվետու տարվա ընթացքում արձանագրվել է վարքագծի կանոնների վերաբերյալ Հանձնաժողով հասցեագրվող դիմումների թվի զգալի աճ: Այսպես, 2025 թվականի ընթացքում ստացված դիմումների թիվն ավելի քան կրկնակի գերազանցել է 2024 թվականին ստացված թիվը (25 դիմում 2025 թվականին և 9 դիմում 2024 թվականին):




Ուսումնասիրությունների արդյունքներով հաշվետու ժամանակաշրջանում հարուցվել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ 10 վարույթ, որոնցից 2-ը հարուցվել են 1 դիմումի հիման վրա: Եվս 2 դեպքում Հանձնաժողովը որոշում է կայացրել նախաձեռնել վարույթ, որոնք, սակայն, հարուցվել են 2026 թվականին: 29 դեպքում Հանձնաժողովը

եզրահանգել է, որ բացակայում են վարույթի հարուցման հիմքերը, պայմանավորված առերևույթ խախտման բացակայությամբ կամ Վարքագծի կանոնագրքի սուբյեկտների շարքից պաշտոնատար անձանց դուրս լինելու հանգամանքով կամ նկատի ունենալով, որ ենթադրյալ խախտումը կատարվել է մինչև Վարքագծի կանոնագրքի ուժի մեջ մտնելը կամ ենթադրյալ խախտման առնչությամբ արդեն իսկ հարուցվել է վարույթ։ Դիմումներից մեկը վերահասցեագրվել է, մեկը՝ վերադարձվել։

Հարուցված վարույթներից 5-ը վերաբերել են քաղաքական, 3-ը՝ վարչական, իսկ 2-ը՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց։

Հարուցված վարույթներից 1-ը կասեցվել է և դեպքի առթիվ ներկայացվել է առերևույթ հանցագործության մասին հաղորդում, որի հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ։ 2024 թվականին ավարտվել է 10 վարույթ (2 վարույթը հարուցվել էին 2024 թվականին), որոնցից 4-ի արդյունքներով արձանագրվել է վարքագծի կանոնների խախտման առկայություն։

Արձանագրված խախտումներն իրենց բնույթով տարբեր են եղել և առնչվել են Վարքագծի կանոնագրքի տարբեր կանոնների։ Մասնավորապես, մեկ վարույթով արձանագրվել է Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի խախտում՝ կապված Ազգային ժողովի նիստի ընթացքում վիճաբանության շրջանակներում վիրավորական արտահայտությունների կատարման հետ, մեկ այլ վարույթով՝ Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի խախտում՝ կապված սոցիալական ցանցում վիրավորական բնույթի հրապարակման կատարման հետ, մեկ վարույթով՝ Վարքագծի կանոնագրքի 14-րդ կետի խախտում՝ կապված այնպիսի խոսքի հետ, որը ողջամտորեն կարող էր ընկալվել որպես քաղաքացու նկատմամբ պաշտոնատար անձի կողմից բռնություն գործադրելու նկատմամբ հանդուրժողականություն կամ դրա արդարացում, և 1 վարույթով՝ 64-րդ կետի խախտում՝ կապված ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից քաղաքական բնույթի հանրային ելույթ ունենալու հետ։

**Ընդհանուր առմամբ կարող ենք արձանագրել, որ Հանձնաժողովի կողմից քննարկված դեպքերի մեծամասնությունում խախտումներն առնչվել են բարեկրթության և հարգալիրության սկզբունքի խախտմանը։**

Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտումների վերաբերյալ ՀՀ վարչապետը[3], Թալին համայնքի ղեկավարը[4] և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամը[5] հանդես են եկել հրապարակային հայտարարություններով։

[3] Հասանելի՝ https://shorturl.at/npLhr
[4] Հասանելի՝ https://talin.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=524
[5] Հասանելի՝ https://tvradio.am/2025/08/21/%d5%b0%d6%80%d5%a1%d5%ba%d5%a1%d6%80%d5%a1%d5%af%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%ba%d5%a1%d6%80%d5%a6%d5%a1%d5%a2%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%b4/

Նշված վարույթների և Վարքագծի կանոնագրքի ենթադրյալ խախտումների կապակցությամբ ուսումնասիրությունների իրականացման ընթացքում արձանագրվել են հետևյալ խնդիրները՝

***1. Խախտում արձանագրելու դեպքում պարզաբանման ներկայացման ժամկետի անհստակությունը՝***

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունը՝ Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնելու հրապարակային պարզաբանում: Միաժամանակ, չի սահմանվում, թե Հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո ինչ ժամկետում է պաշտոնատար անձը պարտավոր ներկայացնել հրապարակային պարզաբանումը և ինչ հետևանքներ են վրա հասնում դրա չներկայացման դեպքում: Նման օրենսդրական բացը լուրջ ռիսկեր է ստեղծում գործնականում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պարզաբանում չներկայացնելու կամ այն զգալի ուշացմամբ ներկայացնելու տեսանկյունից:

Ըստ այդմ, անհրաժեշտ է նախատեսել պարզաբանման ներկայացման հստակ ժամկետներ և վարչական պատասխանատվություն սահմանել պարզաբանում չներկայացնելու կամ օրենսդրական ժամկետի խախտմամբ ներկայացնելու համար:

***2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից սոցիալական ցանցերում պաշտոնական և անձնական էջերի տարանջատման բացակայություն***

Հանձնաժողովի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք սոցիալական ցանցերում հաճախ անձնական բնույթի կամ հասարակական գործունեության վերաբերյալ հրապարակումները և պաշտոնեական գործունեության վերաբերյալ հրապարակումները կատարում են նույն էջով՝ առանց տարանջատումների, թե որ հրապարակումներն են արտահայտում հանրային իշխանության մարմնի դիրքորոշումը, իսկ որոնք՝ ոչ, ինչը կարող է խնդրահարույց լինել հանրային ընկալման տեսանկյունից: Ընդ որում, արձանագրվել են նաև դեպքեր, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք որպես պաշտոնական ծառայող էջերով կատարում են այնպիսի հրապարակումներ, որոնք առերևույթ կերպով կարող են հանգեցնել հանրային իշխանության հեղինակությանը: Բացի այդ, արձանագրվել է, որ անգամ Կառավարության անդամների պարագայում առկա չեն միասնական մոտեցումներ՝ կապված սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի վարման հետ:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը նախաձեռնել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառելի՝ սոցիալական ցանցերում պաշտոնական և անձնական էջերի վարման միասնական ուղեցուցային փաստաթղթի մշակման աշխատանքներ, որոնք պետք է

իրականացվեն ՀՀ վարչապետի աշխատակազմի հետ համագործակցությամբ՝ 2026 թվականի ընթացքում։

***3. Խախտման վերաբերյալ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ կարգավորումների անկատարությունը՝***

Թեև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 28-րդ հոդվածով նախատեսվել է, որ Հանձնաժողովը քննության է առնում առերևույթ խախտման վերաբերյալ ներկայացված դիմումը, եթե այն ներկայացվել է խախտման կատարման պահից մեկ տարվա ընթացքում, միաժամանակ, նշված դեպքը չի նախատեսվել որպես վարույթի հարուցումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու հիմք։

Ընդ որում, նշված խնդիրն առկա է ինչպես վարքագծի կանոնների, այնպես էլ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և շահերի բախման վերաբերյալ վարույթների դեպքում։

Ըստ այդմ, անհրաժեշտ է նախատեսել խախտման կատարման պահից մեկ տարուց ավելի անցնելու հանգամանքը՝ որպես դիմումն առանց քննության թողնելու հիմք։

**Բացի այդ, հաշվետու տարվա ընթացքում չեն հասցեագրվել և պահպանվել են 2024 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրված մի շարք խնդիրներ, որոնք հակիրճ ներկայացնում ենք ստորև՝**

***1. Խախտում արձանագրելու դեպքում ներկայացվող պարզաբանման բովանդակության անհստակությունը՝***

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով, նախատեսելով վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից պարզաբանում ներկայացնելու պարտականությունը, չի մանրամասնվում, թե այն ինչ պետք է բովանդակի, արդյոք հանրային պաշտոն զբաղեցնող անձը կրում է պարզաբանմամբ խախտում կատարելու հանգամանքն ընդունելու պարտականություն, թե ոչ և այլն։ Արդյունքում, գործնականում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք իրենց պարզաբանմամբ կարող են հերքել խախտման առկայությունը այն դեպքում, երբ խախտման առկայությունն օրենքով սահմանված ընթացակարգով հաստատվել է Հանձնաժողովի կողմից։

Վարքագծի կանոնի խախտումը հաստատվելու դեպքում հրապարակային պարզաբանում ներկայացնելու օրենսդրական պարտականության նախատեսումը նպատակ ունի ապահովելու հանրության առջև խախտում կատարած պաշտոնատար անձի հաշվետվողականությունը։ Ուստի, այս նպատակի ամբողջական իրացումը հնարավոր չէ այն դեպքերում, երբ խախտում գործած պաշտոնյան կասկածի տակ է դնում օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից հաստատված փաստը՝ խախտման առկայությունը։

Ըստ այդմ, անհրաժեշտ է սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնի խախտման առկայության վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացության

առնչությամբ հրապարակային պարզաբանման բովանդակությանն ուղղված պահանջ՝ նախատեսելով, որ պարզաբանմամբ խախտում թույլ տված անձն անդրադառնա խախտման կատարման պատճառներին, պարզաբանի դրա կատարման հանգամանքները։

***2. Հանրային իշխանության մարմինների ներքին կարգապահական կանոններով էթիկական բնույթի նորմերի սահմանումը՝***

Հանրային ծառայության մի շարք տեսակների և որոշ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ներքին կարգապահական կանոնները ներառում են էթիկական բնույթի նորմեր, որոնք պետք է սահմանվեն բացառապես վարքագծի կանոններով, քանի որ վարքագծի կանոնները և աշխատանքային կարգապահական ներքին կանոնները տարբեր իրավանորմեր են, որոնք չեն կարող նույնանալ։ Մասնավորապես, վարքագծի կանոնների նպատակը հանրային ծառայողների բարեվարքության ապահովումն է, իսկ կարգապահական կանոնների նպատակը՝ հանրային ծառայողների կողմից ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումը և աշխատավայրում կարգապահությունը ապահովելն է։

Նման տարանջատումը հատկապես կարևոր է՝ նկատի ունենալով, որ վարքագծի կանոնների խախտումները պետք է քննվեն «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան ձևավորված էթիկայի հանձնաժողովների կողմից, իսկ կարգապահական կանոնների խախտումները՝ ծառայողական քննության կամ կարգապահական վարույթի շրջանակներում։

Այս խնդիրն առկա է, օրինակ, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների, ՀՀ ՆԳՆ փրկարարական ծառայողների, քրեակատարողական ծառայողների պարագայում։

Ըստ այդմ, անհրաժեշտ է վերանայել հանրային իշխանության բոլոր մարմինների ներքին կարգապահական կանոնները՝ համոզվելու համար, որ դրանք չեն պարունակում վարքագծի կանոնների հետ նույնացող կամ իրենց բնույթով էթիկական կանոններ։

***3. Պաշտոնների երկակի կարգավիճակը՝***

Հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող ոլորտային օրենսդրությամբ որոշ հանրային պաշտոններ ձեռք են բերել երկակի կարգավիճակ՝ միաժամանակ համարվելով ծառայության բարձրագույն պաշտոններ (օր.՝ զինվորական ծառայության), ինչի արդյունքում անձի նկատմամբ միաժամանակ կիրառելի են լինում ինչպես Վարքագծի կանոնագրքի դրույթները, որոնցով վարույթն իրականացնում է Հանձնաժողովը, այնպես էլ ծառայության տվյալ տեսակի համար սահմանված ոլորտային կանոնները, որոնց ենթադրյալ խախտման վերաբերյալ ծառայողական քննություններն իրականացնում են իրավասու մարմինները։ Նշված օրենսդրական կարգավորումները վարքագծի կանոնների մեկնաբանման և կիրառման տեսանկյունից չեն նպաստում միասնական դաշտի ձևավորմանը

և գործնականում կարող են խնդրահարույց լինել թե՛ խախտման արձանագրման, թե՛ հետագա պատասխանատվության տեսանկյունից:

Հանձնաժողովը ողջունելի է համարում այն հանգամանքը, որ «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքով հստակ նախատեսվել է, որ ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվում է Վարքագծի կանոնագիրքը, ոչ թե ոլորտային կանոնագիրքը՝ հասցեագրելով վերոգրյալ խնդիրը: **Միաժամանակ, անհրաժեշտ է նման կարգավորում նախատեսել նաև երկակի կարգավիճակով այլ պաշտոնների դեպքում:**

***4. Վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի իրականացման ընթացակարգային խնդիրներ՝***

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսվում են վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումների վերաբերյալ անձանց դիմումները վերադարձնելու կամ դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժելու կամ վարույթ հարուցելու մասին որոշում ընդունելու հնգօրյա ժամկետ: Նշված ժամկետը որոշ դեպքերում խիստ սեղմ է Հանձնաժողովի աշխատակազմի կողմից համապարփակ ուսումնասիրություն իրականացնելու և Հանձնաժողովի կողմից դրա արդյունքները քննարկելու համար: Արդյունքում, Հանձնաժողովը զրկված է նախքան վարույթի հարուցումը համապատասխան հարցումներ կատարելու կամ առերևույթ խախտման առկայությունը պարզելու նպատակով անհրաժեշտ այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից, քանի որ դրանց կատարումն իրատեսական չէ հնգօրյա ժամկետում:

Հարկ է նկատել նաև, որ հստակ չեն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված՝ վարույթի հարուցման կամ հարուցումը մերժելու ժամկետները՝ դիմումը վերադարձնելուց հետո կրկին Հանձնաժողովին ներկայացնելու պարագայում:

Ընթացակարգային մյուս խնդիրը վերաբերում է վարույթի հարուցումը մերժելու հիմքերի անկատարությանը: Մասնավորապես, չեն կարգավորվել այն դեպքերը, երբ ներկայացված դիմումով բարձրացված հարցերի ու ներկայացված նույնական փաստական հանգամանքների առնչությամբ Հանձնաժողովն արդեն իսկ հարուցել և դիմումի ստացման պահին իրականացնում է վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթ կամ արդեն իսկ մերժել կամ առանց քննության է թողել վարույթի հարուցումը: Հարկ է նկատել, որ նույնական խնդիրներ առկա են նաև անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, և շահերի բախման վերաբերյալ վարույթների դեպքում:

Ըստ այդմ, անհրաժեշտ է՝

➢ սահմանել Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դիմումի հիման վրա մինչև վարույթի հարուցումը նախնական ուսումնասիրություն

իրականացնելու հնարավորություն կամ վարույթ հարուցելու/վարույթի հարուցումը մերժելու օրենսդրական ավելի երկար ժամկետներ՝ այդ ուսումնասիրությունները հնարավոր դարձնելու նպատակով,

➢ սահմանել դիմումը Հանձնաժողովի կողմից վերադարձնելու դեպքում կրկին ներկայացնելուց հետո վարույթի հարուցման և հարուցումը մերժելու հստակ ժամկետներ,

➢ նախատեսել խախտման նույն դեպքի վերաբերյալ ընթացիկ փուլում գտնվող վարույթի առկայությունը կամ նույն դեպքի վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու որոշման առկայությունը՝ որպես վարույթի հարուցումը մերժելու հիմք:

***5. Վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում կայացված եզրակացության բողոքարկման ընթացակարգի հետ կապված խնդիրները՝***

➢ Հանձնաժողովի եզրակացությունները կարող են բողոքարկվել Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում: Վարչական դատավարության օրենսգրքի 222.10-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման արդյունքում վարչական դատարանի կայացրած դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն, ուժի մեջ են մտնում հրապարակման պահից և դատարանի կողմից նոր փաստերի հաստատման դեպքում՝ հիմք են Հանձնաժողովի կողմից եզրակացությունը վերանայելու համար:

Այս կարգավորումը խնդրահարույց է այն դեպքերում, երբ վարչական դատարանն անցել է նշված գործերի քննության սահմաններից և որպես նոր փաստեր հաստատել է Հանձնաժողովի իրավական գնահատականի արդյունքում կատարված եզրահանգումները, որոնք չեն կարող համարվել փաստեր: Նման դեպքերում Հանձնաժողովը զրկված է դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից և ստիպված է դատական ակտի հիման վրա կայացնել նոր եզրակացություն:

Հարկ է ընդգծել, որ խնդիրը վերաբերելի է նաև անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման վերաբերյալ և վերանայման վարույթների արդյունքում ընդունված եզրակացությունների բողոքարկմանը:

Ըստ այդմ, անհրաժեշտ է նախատեսել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ և վերանայման վարույթների արդյունքում ընդունված եզրակացության վերաբերյալ վարչական դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն այն դեպքում, երբ դատարանն անցել է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ դատական վերանայման սահմանները:

Ի լրումն վերոգրյալի՝ հարկ է նշել, որ վարքագծի կանոնների կիրառման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով հաշվետու տարում Հանձնաժողովի

նախաձեռնությամբ և Հանձնաժողովի դիմումի հիման վրա Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) մշակել և տրամադրել է Պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների խախտումների նկատմամբ արտահայտման ազատության միջազգային չափորոշիչների կիրառման վերաբերյալ համեմատական ուսումնասիրություն, որն արժեքավոր աղբյուր է Հանձնաժողովի կողմից վարքագծի կանոնների խոսքային բնույթի խախտումների քննության ընթացքում միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան խոսքի իրավաչափության գնահատման տեսանկյունից:

### *1.4 Անհամատեղելիության պահանջների պահպանումը*

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի կարգավորումների՝ Հանձնաժողովի գործառույթներից է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների պահպանմանը հետևելը, ինչպես նաևանհամատեղելիության պահանջների մեկնաբանման և դրանց կիրառման միասնականությունն ապահովելը: Հանձնաժողովի նշված լիազորությունների շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են դիմումների և հրապարակումների, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ անհամատեղելիության պահանջների պահպանման ուսումնասիրություններ,ինչպես նաև հանրային իշխանության մարմիններին և հանրային ծառայողներին տրամադրվել է խորհրդատվություն Ստացված խորհրդատվությունների և պարզաբանումների արդյունքում էականորեն բարելավվել է հանրային իշխանության այլ մարմինների պրակտիկան՝ կապված հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների խախտումների բացահայտման և կանխարգելման, ինչպես նաև դրանց քննությունների հետ: Ընդ որում՝ հաշվետու տարում աճել է անհամատեղելիության պահանջների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տրամադրված խորհրդատվությունների թիվը:

2025 թվականին Հանձնաժողովն իրականացրել է անհամատեղելիության պահանջների վերաբերյալ 39 ուսումնասիրություն՝ 1-ը մեդիա հրապարակումների, 34-ը՝ դիմումների, 1-ը՝ ազդարարման, ևս 3-ը՝ Հանձնաժողովում իրականացվող այլ գործընթացների շրջանակներում ի հայտ եկած խախտումների հիման վրա: Ընդհանուր առմամբ՝ նախորդող տարիների համեմատությամբ անհամատեղելիության պահանջներին առնչվող ուսումնասիրությունների հանրագումարային թիվն էապես չի փոփոխվել, այդուհանդերձ, զգալիորեն նվազել է

վերաբերելի մեդիա հրապարակումների թիվը և որոշակիորեն ավելացել է դիմումների և գրությունների թիվը:

### *1.4.1 Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում*

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հետևում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը:

Սույն գործառույթի ապահովման շրջանակներում Հանձնաժողովը 2025 թվականին նախաձեռնել է ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և վերջիններիս տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում, որի արդյունքները Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակվել են 2025 թվականի դեկտեմբերի 29-ին:

Մշտադիտարկումն իրականացվել է Հանձնաժողովի 2025 թվականի մարտի 20-ի N 02-Լ որոշմամբ հաստատված պլանի համաձայն՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/03/00-20.pdf: Հայաստանի Հանրապետությունը կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ստանձնել է միջազգային պարտավորություններ. մասնավորապես, Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման 5-րդ փուլի շրջանակներում դիտարկվել է բարձրագույն գործադիր մարմիններում և իրավապահ մարմիններում բարեվարքության խթանումը և կոռուպցիայի կանխարգելումը, որի համատեքստում՝ 2024 թվականի մարտին հաստատվել է Հայաստանի գնահատման զեկույցը՝ պետությանը ներկայացնելով համապատասխան հանձնարարականներ՝ նշված սուբյեկտային կազմի բարեվարքության խթանման ուղղությամբ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովի կողմից 2025 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային պաշտոններ սահմանվել են ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և վերջիններիս տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները՝ ընդհանուր թվով 114 պաշտոնատար անձ:

Հարկ է նկատել, որ պաշտոնների և վերջիններիս գործառույթների ռիսկայնությունը գնահատելիս ԳՐԵԿՈ-ի կողմից, ի թիվս այլնի, հիմք են ընդունվել վերջիններիս՝ կառավարման համակարգում ունեցած կարգավիճակը, նշանակման գործընթացը, որոշումների կայացման առանձնահատկությունները, վարձատրության կարգը և այլ հանգամանքներ:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերը՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում վերջիններիս հնարավոր մասնակցությունը կամ գործադիր մարմնում ներկայացվածությունը պարզելու նպատակով: Արդյունքում արձանագրվել է, որ՝

- 114 պաշտոնատար անձանցից 20-ի հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձինք՝ ընտանիքի անդամները, զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ: Ընդ որում, 3 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը մասնակցել են հանրային գնումների գործընթացների, որոնցից 1 դեպքում պատվիրատու է հանդիսացել մարզպետարանը, մյուս 2 դեպքում՝ տարբեր համայնքներ:
- 114 պաշտոնատար անձանցից 78-ը երբևէ չեն ունեցել մասնակցություն կամ ներկայացվածություն առևտրային կազմակերպություններում:
- 114 պաշտոնատար անձանցից 36-ը տարբեր ժամանակահատվածներում մասնակցություն կամ ներկայացվածություն են ունեցել (ունեն) առևտրային կազմակերպություններում կամ հաշվառված են եղել որպես անհատ ձեռնարկատեր:
- Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձանցից ընդհանուր թվով հինգը պաշտոնավարման ընթացքում փաստացի ունեցել են մասնակցություն գործող առևտրային կազմակերպություններում: Բոլոր այն դեպքերում, երբ առևտրային կազմակերպությունները եղել են փաստացի գործող, Հանձնաժողովը հավելյալ գնահատման է արժանացրել հավատարմագրային կառավարման պահանջների պահպանումը: Արդյունքում արձանագրվել է, որ երկու դեպքում պաշտոնատար անձի բաժնեմասն օրենքի պահանջներին համապատասխան հանձնված է եղել հավատարմագրային կառավարման: Երկուսի դեպքում Հանձնաժողովը «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցել է վարույթ, որոնցից մեկը եզրափակվել է անհամատեղելիության պահանջների խախտման առկայության մասին եզրակացությամբ, իսկ երկրորդը՝ դրա բացակայությամբ: Հինգերորդ դեպքում՝ Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության շրջանակներում պարզ է դարձել, որ պաշտոնատար անձի՝ առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնված եղել հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները չբավարարող անձի: Այդուհանդերձ, Հանձնաժողովն,

իրականացնելով համակողմանի ուսումնասիրության, որոշել է վարույթ չհարուցել՝ հիմք ընդունելով այն, որ ուսումնասիրության շրջանակներում ներկայացվել են հիմնավորումներ, որոնց գնահատմամբ փաստվել է, որ անձը փաստացի չի մասնակցել կազմակերպության կառավարմանը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրության փուլում ձեռնարկել է անհամատեղելիության պահանջների խախտման վերացմանն ուղված անհրաժեշտ քայլեր՝ ապահովելով բաժնեմասի հավատարմագրային կառավարման փոխանցումը օրենքով հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները բավարարող անձի:

● Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են նաև պաշտոն զբաղեցնող անձանց՝ բաժնային արժեթղթեր ունենալու հանգամանքը և առկայության դեպքում դրանց սահմանաչափերը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ 114 պաշտոնատար անձից 4-ը պաշտոնավարման ընթացքում տիրապետել են բաժնային կամ պարտքային արժեթղթերի: Մասնավորապես, պաշտոնատար 3 անձ ունեցել է պարտատոմսեր, մեկ անձ՝ ցուցակված ընկերության՝ առևտրի թույլատրված բաժնային արժեթղթեր: Առևտրի թույլատրված արժեթղթերի քանակը չի գերազանցել օրենքով սահմանված թույլատրելի շեմը: Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են նաև նախարարի տեղակալի պաշտոն զբաղեցնող 4 անձի և նախարարի խորհրդականի պաշտոն զբաղեցնող 3 անձի կողմից այլ աշխատանք կատարելու, ինչպես նաև այլ աշխատանքի դիմաց վարձատրության ստացման վերաբերյալ տվյալները՝ մասնավորապես՝ վերջիններիս կողմից 2024 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրած այլ եկամուտները և Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների վերաբերելի տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ 3 պաշտոնատար անձի դեպքում վերջիններիս հայտարարագրում առկա այլ եկամուտից ստացված եկամուտները եղել են կրթական աշխատանքի համար ստացված վարձատրություն, 2 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձինք պաշտոնավարմանը զուգահեռ զբաղվում են գիտական աշխատանքով, 1 դեպքում՝ այլ վճարովի աշխատանքի դիմաց հայտարարագրված եկամուտը հանդիսացել է անձի նախկին աշխատավայրից ստացած վարձատրությունը: Միաժամանակ, անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման, մասնավորապես, հանրային պաշտոնում պաշտոնավարմանը զուգահեռ այլ վճարովի աշխատանքի իրականացման հիմքով հարուցվել է 1 վարույթ, սակայն Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության եզրակացության ընդունման անհրաժեշտությունը վերացել է՝ հաշվի առնելով եզրակացության կայացման պահին անձի կողմից հանրային պաշտոնից ազատված լինելու հանգամանքը:

Մշտադիտարկման շրջանակներում, ի թիվս անհամատեղելիության պահանջներին առնչվող խախտումների, արձանագրվել էին 26 անձանց, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի

անդամների կողմից հայտարարագրմանը ներկայացվող պահանջների առերևույթ խախտման դեպքեր, մասնավորապես՝ հայտարարագրման ենթակա տվյալների չհայտարարագրման կամ թերի հայտարարագրման, որոշ դեպքերում՝ հայտարարագրերի չներկայացման դրսևորումներով, ինչի շրջանակներում իրականացվել են Հանձնաժողովի լիազորություններից բխող գործընթացներ:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովն իր նախորդ տարվա գործունեության հաղորդմամբ անդրադարձել էր հավատարմագրային կառավարման ինստիտուտի բացերին, արձանագրելով հետևյալ խնդիրները՝

- Անհամատեղելիության պահանջները սահմանող հոդվածի իմաստով փոխկապակցված անձանց շրջանակը իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում չի վերանայվել. ներկայիս կարգավորումներով՝ այն ներառում է պաշտոն զբաղեցնող անձի ամուսնուն, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակին, ծնողին, քրոջը և եղբորը: Արդյունքում, հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ընտանիքի անդամների կողմից հիմնադրած առևտրային կազմակերպությունները հնարավորություն ունեն հանդես գալ որպես գույքի հավատարմագրային կառավարիչներ՝ փաստացի առևտրային կազմակերպության մասնակցության կառավարումը թողնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի վրա: Արդյունքում, հավատարմագրային կառավարման հանձնելու պահանջի նկատմամբ հսկողությունը շատ դեպքերում կրում է ձևական բնույթ և չի բացառում հավատարմագրային կառավարման գործընթացի վրա պաշտոն զբաղեցնող անձի հնարավոր կամ իրական ազդեցությունը: Ավելին, պաշտոնատար անձինք առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասի կառավարումը կարող են հանձնել նույն առևտրային կազմակերպությանը, ինչը օրենսդրորեն արգելված չէ: Միաժամանակ, նման հայեցողությունը Հանձնաժողովը խիստ ռիսկային է համարում, ինչը խաթարում է նաև հանրության լայն հատվածի վստահությունը՝ ստեղծելով կարգավորումների ձևական վերանայման տպավորություն, որը բովանդակային առումով չի զսպում բիզնեսի և իշխանության սերտաճման ռիսկերը:
- Հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջների հստակեցումից զատ օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի հավատարմագրային կառավարումը նախատեսվեց որպես ծանուցման ենթակա գործունեություն՝ նախատեսելով հավատարմագրային կառավարման պայմանագրերի՝ պետական գրանցման պահանջ: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ պայմանագրերի գրանցման

պահանջը չի տարածվում նախկինում՝ մինչև օրենսդրական փոփոխություններն արդեն իսկ կնքված պայմանագրերի նկատմամբ, ինչի արդյունքում Հանձնաժողովն իր լիազորություններից բխող ուսումնասիրությունների շրջանակներում ստիպված է լինում պայմանագրերը հայցել պաշտոնատար անձանցից: Միաժամանակ, բաժնետիրական ընկերությունների դեպքում պայմանագրերի գրանցման պահանջը բացակայում է:

- Պրակտիկայում պաշտոնատար անձինք նախընտրում են բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու փոխարեն՝ օտարել:

Հարկ է նշել, որ նշված խնդիրները հաշվետու տարվա ընթացքում օրենսդրական մակարդակով չեն հաստատվել և շարունակում են կարգավորումների կիրարկման վրա բացասաբար ազդել, միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ առկա է նաև իրազեկվածության պակաս՝ չնայած պարբերաբար իրականացվող վերապատրաստումներին:

Վերոնշյալ խնդիրների վերլուծության արդյունքում Հանձնաժողովը ևս մեկ անգամ վերահաստատում է իր դիրքորոշումը, որ պետությունը պետք է շարժվի հավատարմագրային կառավարիչների մասնագիտացված ինստիտուտի ձևավորման ճանապարհով՝ ապահովելով օրենսդրական և գործնական այնպիսի դաշտ, որի դեպքում պաշտոնատար անձինք կնախընտրեն իրենց գույքի, տվյալ դեպքում՝ բաժնեմասերի կառավարումը վերապահել մասնագիտացված անձանց (կազմակերպություններին)՝ ի հակադրումն փոխկապակցված անձանց հանձնելու կամ օտարելու պրակտիկայի:

Մշտադիտարկման ողջ գործընթացի և արձանագրված խախտումների, ինչպես նաև ընդհանուր վիճակագրության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/jTsYw:

### *1.4.2. Այլ սահմանափակումների վերաբերյալ ուսումնասիրություններ.*

Հաշվետու տարում Հանձնաժողովն այլ սահմանափակումների վերաբերյալ իրականացրել է 10 ուսումնասիրություն, որից 1-ը՝ մեդիա հրապարակման հիման վրա, 4-ը՝ դիմումների, 2-ը՝ ազդարարման, և 3-ը՝ Հանձնաժողովում իրականացվող այլ գործընթացների շրջանակներում ի հայտ եկած տվյալների հիման վրա: Բացի նշվածից, ևս 1 դեպք ուսումնասիրվել է շահերի բախման վերաբերյալ մեդիա հրապարակման ուսումնասիրության շրջանակներում:

Այլ սահմանափակումների վերաբերյալ ստացված դիմումների վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է համապատասխան պարզաբանումներ: Դրանք հիմնականում վերաբերել են մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ

անմիջական վերադասությամբ աշխատանքի արգելքին, հետաշխատանքային սահմանափակումներին, ինչպես նաև հանրային ռեսուրսները ոչ ծառայողական նպատակով օգտագործելու արգելքին:

Նկատելի է, որ Հանձնաժողովի կողմից այլ սահմանափակումների վերաբերյալ ստացված դիմումները և մեդիա հրապարակումներն իրականացված ընդհանուր ուսումնասիրությունների համատեքստում ամենասակավն են եղել, ինչը պայմանավորված է նաև ինստիտուտի՝ ամբողջությամբ կայացած չլինելու հանգամանքով:

Հանձնաժողովը ինչպես նախորդ տարիների տարեկան հաղորդումներում, այնպես էլ բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումներում անդրադարձել էր հետաշխատանքային սահմանափակումների համար պատասխանատվության միջոցների բացակայությանը: Այսպես, գործող օրենսդրությամբ այլ սահմանափակումները չպահպանելու համար նախատեսված է կարգապահական պատասխանատվություն, միաժամանակ, այն չի կարող կիրառելի լինել պաշտոնավարման դադարեցումից հետո կատարված արարքների դեպքում: Այլ սահմանափակումների, մասնավորապես՝ հետաշխատանքային սահմանափակումների խնդիրներին է անդրադառնում նաև Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպությունը (OECD) Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույցում, ըստ որի՝ սույն հիմքով գնահատման շրջանում քննություններ չեն իրականացվել և պատասխանատվություն չի կիրառվել: Ըստ այդմ, Հանձնաժողովը բազմիցս շեշտել է միջազգային փորձի տեղայնացմամբ հետաշխատանքային սահմանափակումների, դրանց կիրառման պայմանների և պատասխանատվության կառուցակարգերի հստակեցման անհրաժեշտությունը:

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է օրենքների փոփոխությունների և լրացումների նախագծերի փաթեթ, որով առաջարկվում է ընդլայնել ՀՀ վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, նրանց խորհրդականների և նախարարների տեղակալների նկատմամբ կիրառելի հետաշխատանքային սահմանափակումները՝ դրանց համար նաև նախատեսելով վարչական պատասխանատվություն:

Հանձնաժողովը նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացրել է իր դիտարկումները, որոնք հիմնականում վերաբերում են այն հանգամանքին, որ նախագծերի փաթեթով հետաշխատանքային սահմանափակումների առաջարկվող հասկացությունները և պատասխանատվության միջոցները կիրառվում են սահմանափակ թվով պաշտոնատար անձանց նկատմամբ, մինչդեռ դրանք առավել կարևոր են այլ հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, հատկապես, **պետական վերահսկողական կամ հսկողական լիազորությամբ օժտված պաշտոնատար անձանց կամ պետական ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** (օրինակ՝ Պետական եկամուտների

կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց, Կոռուպցիայի կանխարգելման, Մրցակցության պաշտպանության, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների, Հաշվեքննիչ պալատի անդամներ) պարագայում, քանի որ նրանք, իրենց ծառայողական լիազորությունների առանձնահատկություններով պայմանավորված, կարող են ավելի մեծ հասանելիություն ունենալ որոշակի ոլորտի մասնավոր կազմակերպությունների գործունեության, այդ թվում՝ նրանց առևտրային գաղտնիքի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունների, հետևաբար նրանց պարագայում հետաշխատանքային սահմանափակումների խախտման դեպքում ծառայողական տեղեկատվության արտահոսքի և հակամրցակցային նպատակներով չարաշահման ռիսկն ավելի բարձր է:

Հանձնաժողովն ընդգծում է, որ ներկայացված նախագծերի փաթեթը, հասցեագրելով միայն գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետաշխատանքային սահմանափակումների հարցը, չի կարող կարգավորել հետաշխատանքային սահմանափակումների կիրառման հետ կապված գործնականում առկա խնդիրները, քանի որ այն հատվածական կերպով է հասցեագրում դրանք և դուրս է թողնում հանրային այլ պաշտոններ զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների դեպքում հետաշխատանքային սահմանափակումների գործնական կիրառման խնդիրները, մասնավորապես և հատկապես՝ պատասխանատվության կառուցակարգերի հետ կապված հարցերը: Ընդ որում, պաշտոնատար անձանց տարբեր կատեգորիաների համար տարբեր կարգավորումների նախատեսումը հակասում է բարեվարքության համակարգի միասնականացման տրամաբանությանը:

Ըստ այդմ, անհրաժեշտ է վերանայել նախագծերի փաթեթով առաջարկվող լուծումները՝ սահմանելով հետաշխատանքային սահմանափակումների կիրառման միասնական և գործուն կառուցակարգեր, այդ թվում՝ պատասխանատվության միջոցներ և դրանց քննության մեխանիզմներ **բոլոր** հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, և ոչ թե միայն գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար:

### *1.4.3 Անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների հետևանքների անհստակությունը*

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ անհամատեղելիության պահանջների խախտումը հիմք է հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների դադարեցման կամ պաշտոնից ազատման համար: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի կարգավորումների համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության մասին:

Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում)։ Պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:

Ղեկավարվելով օրենքի վերոնշյալ պահանջներով՝ Հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով հարուցված վարույթների արդյունքում ընդունում է խախտման առկայությունը կամ բացակայությունը հաստատող եզրակացություններ։ **Գործնականում, սակայն, արձանագրվել են դեպքեր, երբ անհամատեղելիության պահանջի խախտման հիմքով Հանձնաժողովի՝ համապատասխան մարմնին (իրավասու անձին) ներկայացված միջնորդությունները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների դադարեցման վերաբերյալ, թողնվել են առանց քննության։** Ավելին, առանձին դեպքում անձի լիազորությունների դադարեցման հարցը քննելու իրավասություն ունեցող մարմինը ոչ միայն հրաժարվել է քննել անձի լիազորությունների դադարեցման հարցը, այլև խախտման առկայության մասին Հանձնաժողովի եզրակացության պայմաններում առաջ է քաշել դիրքորոշում առ այն, որ անձի կողմից չեն խախտվել անհամատեղելիության պահանջները։

2025 թվականին Հանձնաժողովն ընդունել է անհամատեղելիության պահանջների խախտման առկայության վերաբերյալ 3 եզրակացություն՝ դիմելով իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների խախտման վերացման առաջարկությամբ։ Միաժամանակ, գործնականում նշված պաշտոնատար անձանցից ոչ մեկի լիազորությունները չեն դադարեցվել, թեև առանձին դեպքերում պաշտոնատար անձանց կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ խախտման հիմք հանդիսացած հանգամանքները այլ եղանակով վերացնելու ուղղությամբ, օրինակ՝ առևտրային ընկերությունում ունեցած բաժնեմասը ժամկետի խախտմամբ հավատարմագրային կառավարման հանձնելով կամ օտարելով, թեև «Հանրային ծառայության մասին» օրենքը անհամատեղելիության պահանջների խախտման համար նախատեսում է բացարձակ որոշակի պատասխանատվության միջոց, այն է՝ պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցում կամ զբաղեցրած պաշտոնից ազատելը:

Նշվածը հատկապես խնդրահարույց է հետևյալ պատճառաբանությամբ.

➢ Հարկ է ընդգծել, որ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները մեկնաբանող իրավասու մարմինը բացառապես Հանձնաժողովն է, ով ապահովում է նաև

անհամատեղելիության պահանջների կիրառման միասնականությունը, հետևապես՝ անձի լիազորությունները դադարեցնելու իրավասություն ունեցող մարմնի կամ անձի կողմից Հանձնաժողովի եզրակացությամբ հաստատված անհամատեղելիության պահանջի խախտման փաստի քննությունը չի կարող համարվել իրավաչափ և առհասարակ, նման ընթացակարգ նախատեսված չէ օրենսդրությամբ: Ավելին, պետք է նկատել, որ Հանձնաժողովի գործունեությունը կարգավորող օրենքով նախատեսվում է, որ Հանձնաժողովի եզրակացությունները (այդ թվում՝ վերանայման վարույթի արդյունքում ընդունված) կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դրանք փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակում, հետևապես, Հանձնաժողովի կողմից հաստատված փաստերը փոփոխվելու կամ նոր փաստեր իր հայտ գալու դեպքում՝ Հանձնաժողովը վերանայում է իր եզրակացությունը և ընդունում նոր եզրակացություն: Նշվածը ենթադրում է, որ Հանձնաժողովի հաստատած փաստը՝ կապված անհամատեղելիության պահանջի խախտման հետ, չի կարող վերանայվել կամ այլ կերպ մեկնաբանվել այն մարմնի կողմից, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում՝ չնայած գործնականում նման դեպքերի առկայության:

➢ Պետք է նկատել, որ նույն համատեքստում օրենսդրական մեկ այլ մարտահրավեր է Հանձնաժողովի եզրակացության ներկայացման դեպքում դրա քննարկման արդյունքում խախտում թույլ տված անձի լիազորությունների դադարեցման ժամկետի սահմանված չլինելը: Մասնավորապես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը սահմանում է, որ իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է քննարկել Հանձնաժողովի առաջարկը և արդյունքների մասին ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան եզրակացությունը ստանալու պահից 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին: Սակայն, չեն հստակեցվում անձի լիազորությունների դադարեցման ժամկետները, ինչը մեծացնում է իրավասու մարմնի հայեցողությունների շրջանակը:

➢ Ի լրումն թվարկվածի՝ հարկ է նաև նկատել, որ Հանձնաժողովի առաջարկի քննարկման արդյունքների մասին տեղեկացման ներքո չեն նախանշվում այնպիսի պահանջներ, որոնց ներկայացմամբ իրավասու մարմինները կհիմնավորեն կամ կփաստարկեն իրենց դիրքորոշումը, ինչը նշանակում է, որ, գործնականում, արդյունքների բացակայությունը կամ քայլեր չձեռնարկելու մասին ֆորմալ տեղեկացումը բավարար կլինի սույն դրույթի պահանջի ապահովման համար:

**Հանձնաժողովի եզրակացությունների չկատարումն, այս իմաստով, վտանգավոր նախադեպ է և սպառնում է խաթարել անհամատեղելիության պահանջների ինստիտուտի կայունությունն ու այդ պահանջների միասնական կիրառման հնարավորությունը:**

Վերոգրյալը վերստին ընդգծում է, որ Հանձնաժողովի կողմից ընդունված եզրակացությունների խորհրդատվական բնույթը թույլ չի տալիս պատշաճ վերացնել

անհամատեղելիության պահանջների խախտումները, ավելին, այլ մարմինների կողմից փաստացի գնահատվում են անհամատեղելիության պահանջի խախտման առկայության հարցը՝ չնայած նրան, որ նշվածը Հանձնաժողովի բացառիկ իրավասություն է:

Ըստ այդմ՝ անհրաժեշտ է վերանայել օրենսդրական կարգավորումները՝ Հանձնաժողովի եզրակացությունները դարձնելով պարտադիր կատարման ենթակա, ինչը կբացառի մարմինների կողմից խախտումների հաստատման դեպքում գործողություններ չձեռնարկելու պրակտիկան և խախտում թույլ տված անձանց՝ պաշտոնավարումը շարունակելու հնարավորությունը:

### *1.5 Շահերի բախման վերաբերյալ քննություններ*

Հանձնաժողովին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով վերապահվել է լիազորություն՝ քննելու և լուծելու պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերը: Միաժամանակ, Հանձնաժողովը հետևում է պաշտոնատար անձանց նույն շրջանակի շահերի բախման կարգավորումների պահպանմանը, իսկ բոլոր դեպքերում, երբ անձը չի հանդիսանում Հանձնաժողովի սուբյեկտը, շահերի բախման իրավիճակների քննության կամ լուծման առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններին: Հաշվետու տարում շարունակվել են այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

2025 թվականին Հանձնաժողովն իրականացրել է շահերի բախման վերաբերյալ **108 ուսումնասիրություն,** որից **25** դեպքում ուսումնասիրության հիմք են հանդիսացել մեդիա հրապարակումները, **82** դեպքում՝ այլ գերատեսչություններից ստացված գրությունները կամ քաղաքացիների դիմումները, **1** դեպքում՝ ազդարարի ներկայացրած հաղորդումը: Հատկանշական է, որ շահերի բախման դեպքերի վերաբերյալ ուսումնասիրությունների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 75.6 տոկոսով կամ 62-ով: Ինչպես և 2024 թվականին, հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված հրապարակումների և գրությունների գերակշիռ մասն առնչվել է գնումների գործընթացներում, հատկապես՝ համայնքային գնումներում շահերի բախման դեպքերին, պատվիրատու մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց հետ փոխկապակցված առևտրային կազմակերպությունների մասնակցությանը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի՝ փոխկապակցված անձանց օտարման կամ օգտագործման, ինչպես նաև թույլտվությունների տրամադրմանը: Ընդ որում,

51 դեպքում վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք (հիմնականում համայնքների ղեկավարները) շահերի բախման դեպքերում (մեծամասամբ համայնքային գնումների գործընթացում),նախքան որոշում ընդունելը կամ գործողություն կատարելը, Հանձնաժողով են ներկայացրել գրավոր հայտարարությունը՝ հայցելով իրավիճակի լուծման վերաբերյալ վերջինիս առաջարկությունը: 2024 թվականի համեմատությամբ նման դեպքերը ավելացել են տասն անգամ:

Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում 2025 թվականին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի պահանջների խախտումներ՝ շահերի բախման իրավիճակում պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Հանձնաժողովին հայտարարություն չներկայացվելու դեպքեր, որոնց հիման վրա հարուցել են համապատասխան վարչական վարույթներ և վարչական պատասխանատվության ենթարկել համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող 14 անձանց: Բոլոր դեպքերում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրության շրջանակներում հանգել է այն եզրահանգման, որ պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կատարված արարքները (ընդունված որոշումները) կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ենթադրյալ հանցագործության հատկանիշներ, դիմել է իրավասու մարմիններին խնդրելով քննության առնել դեպքերը՝ քրեաիրավական նորմերով սահմանված հիմքերի առկայությունը պարզելու նպատակով, այդ թվում՝ իրականացնել օպերատիվ ստուգում:

Բոլոր դեպքերում, երբ ընթացակարգային առումով առերևույթ խնդիրներ առկա չեն եղել, Հանձնաժողովն առաջարկել է գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման առումով նախապես հանդես գալ տվյալ իրավիճակում շահերի բախման առկայության մասին հայտարարությամբ: Վերոգրյալը մի կողմից թույլ է տալիս ապահովել կարգավորումների միատեսակ կիրառելիությունը, մյուս կողմից հնարավորություն է տալիս տվյալ գործընթացների նկատմամբ ապահովելու հանրային ավելի լայն վերահսկողություն:

Հարկ է նշել, որ Ֆինանսների նախարարության կողմից մշակվել և շրջանառվել է ««Գնումների մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի հիմնական նպատակը հանրային պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների հետ փոխկապակցված ընկերությունների գնման գործընթացներին մասնակցելու սահմանափակումների համակարգի նախատեսումն է՝ ըստ ազդեցության մակարդակների: Նշված փոփոխություններով գնման գործընթացներին մասնակցելու սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը նախատեսվել է վերապահել Հանձնաժողովին:

Օրենսդրական նշված վերանայումը նախատեսված է եղել նաև 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրով, ըստ որի՝ պետք է

բացառվի պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացում:

Չնայած «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխություններին՝ հարկ է նկատել, որ շահերի բախման կառուցակարգերը վերաբերելի են ոչ բոլոր պաշտոններին (պաշտոնների խմբերին): Մասնավորապես՝

➢ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա: Շահերի բախման կարգավորումներն, այսպիսով, չեն տարածվում ներկայում համայնքային վարչական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ:

➢ Դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի վրա սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերը չեն տարածվում: Վերջիններիս նկատմամբ կիրառելի են հոդվածի՝ շահերի բախման հասկացությունը բովանդակող դրույթները: Միաժամանակ, դատավորի շահերի բախումը կարգավորվում է Դատական օրենսգրքով՝ դատավորի վարքագծի կանոնների ներքո նախատեսելով շահերի բախում թույլ չտալու պարտավորությունը և առանձին հոդվածով կանոնակարգելով ինքնաբացարկի դեպքերը, սակայն նշված կարգավորումների ներքո պաշտոնեական լիազորությունների վրա ազդեցություն ունեցող հարաբերությունների շրջանակն ավելի սահմանափակ է և առավելապես միտված է մերձավոր ազգակցությամբ պայմանավորված փոխկապակցվածության պարագայում հնարավոր ազդեցության չեզոքացմանը:

➢ 2025 թվականի ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը շրջանառել է ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով, ի թիվս այլնի, նախատեսվել են համայնքների ավագանու անդամների շահերի բախման իրավիճակի լուծման կարգավորումները, այդուհանդերձ, դրանք համապարփակ չեն և չեն անդրադառնում շահերի բախման իրավիճակների լուծման կառուցակարգերին և պատասխանատվության ինստիտուտին:

### *1.6 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը*

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.3 կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելը, նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը: Միաժամանակ, Հանձնաժողովի լիազորությունների ներքո ամրագրվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստրի վարումը և նվերների հաշվառման ռեեստրի հրապարակման ենթակա տվյալների հրապարակումը:

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում շարունակել է իրականացնել հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների հաշվառումը և հրապարակումը՝ հաշվառման ձևաթղթերի միջոցով: Այսպես՝ 2025 թվականին հաշվառվել և Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հրապարակվել է նվերի հաշվառման 195 ձևաթուղթ: Նախորդ տարվա համեմատ հաշվառված և հրապարակված նվերների թիվը աճել է մոտ 7 անգամ, ինչը հնարավոր է եղել ապահովել նաև Հանձնաժողովի կանխարգելիչ մանդատի շրջանակներում իրականացված մշտադիտարկման և համապատասխան մարմիններին ուղղված գրություններով, որով առաջարկվել է օրենքով սահմանված կարգով իրականացնել հաշվառման ենթակա նվերների հաշվառումը: Արդյունքում՝ նվերներն, ըստ սահմանված կարգի, հաշվառվել և հրապարակվել են համապատասխան ձևաթղթերի լրացման միջոցով:

Հանձնաժողովը հաշվետու տարում հաշվառման գործընթացի կազմակերպմանը զուգահեռ խորհրդատվություն և մեթոդական աջակցություն է տրամադրել հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին՝ նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող հարցերի շուրջ (ամենօրյա ռեժիմով): Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով աջակցություն է տրամադրել նաև ստացված թվով 60 նվերի գնորոշման հարցում:

Ներկայում նվերների հաշվառման գործընթացը շարունակվում է դեռևս էլեկտրոնային ձևաթղթերի լրացման և ներկայացման միջոցով:

Ռեեստրի ստեղծման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս Հանձնաժողովի գործառույթների թվայնացում բաժնում:




*1.7 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարում*

Տարեկան վիճակագրության ամփոփման նպատակով Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբեր ամսին մշակել և շրջանառել է էլեկտրոնային հարցաթերթ, որի միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել հանրային իշխանության մարմիններից, այդ թվում՝ համայնքապետարաններից: 2025 թվականի վիճակագրական տվյալները վերլուծվել են 2026 թվականին և ավելի մանրամասն ենթակա են ներկայացման բարեվարքության վիճակի գնահատման տարեկան հաղորդմամբ:

2025 թվականին անցկացված հարցմանը մասնակցել են պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման թվով 93 մարմիններ: Հարցաթերթերը լրացվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից: 2024 թվականի համեմատությամբ՝ 2025 թվականի հարցմանը մասնակցած գերատեսչությունների թիվը 10-ով ավելացել է, իսկ 2023 թվականի համեմատությամբ՝ 64-ով: Այնուամենայնիվ, որակական առումով ստացված տվյալները նախորդ տարվա համեմատ գրեթե նույնական են:

2025 թվականի վիճակագրությունն ուսումնասիրելու նպատակով Հանձնաժողովի կողմից իրականացված հարցման արդյունքների ամփոփ տվյալների համաձայն՝

- հարցմանը մասնակցած գերատեսչությունների ճնշող մեծամասնությունը՝ մոտ 90%-ը, չունի վիճակագրություն վարելու ներքին մեխանիզմներ: Երեք գերատեսչությունում վիճակագրության վարման մեխանիզմները գտնվում են մշակման փուլում: Գերատեսչություններից մեկը նշել է, որ մշակվել է ներքին օգտագործման համար նախատեսված նվերների հաշվառման էլեկտրոնային մատյան: Մեկ այլ գերատեսչությունում վիճակագրությունն իրականացվում է ներքին ծրագրային հնարավորությունների միջոցով ձևավորված ցուցակով, որը հրապարակման ենթակա չէ: Հարցմանը մասնակցած համայնքապետարաններից չորսն արձանագրել է, որ ունի համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված բարեվարքության պլան: Գերատեսչություններից մեկը նշել է, որ վիճակագրությունը վարվում է կարգապահական տույժեր կիրառելու մասին՝ գերատեսչության նախագահի հրամանների ուսումնասիրությունների միջոցով, որոնց համար հիմք են հանդիսանում գերատեսչության ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի եզրակացությունները:

Հարցմանը մասնակցած 93 գերատեսչություններից 13-ում անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման իրավակարգավորումների խախտման 230 դեպք է արձանագրվել, որից՝ 205-ը վերաբերել է վարքագծի կանոններին, 20-ը՝ շահերի բախման կարգավորումներին, 4-ը՝ անհամատեղելիության պահանջներին, 1-ը՝ այլ սահմանափակումներին: Արձանագրված խախտումների թիվը 2024-ի համեմատությամբ աճել է շուրջ 100-ով, իսկ 2023-ի համեմատությամբ՝ շուրջ 200-ով: Արձանագրված խախտումների հիմք են հանդիսացել որոշ գերատեսչություններում իրականացված օպերատիվ միջոցառումները, ներքին մոնիթորինգի արդյունքները, դիմումներ, զեկուցագրեր: Նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքեր հարցված գերատեսչություններում չեն արձանագրվել:




Հարկ է նկատել, որ անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով իրականացվել է ծառայողական 3 քննություն: Գերատեսչություններից առաջինում իրականացված ծառայողական քննության արդյունքում հայտարարվել է «խիստ նկատողություն»: Երրորդ գերատեսչությունում իրականացված ծառայողական 2 քննությունների նյութերը թողնվել են անհետևանք՝ ծառայողների՝ ծառայությունից ազատվելու պատճառով: Վարքագծի կանոնների խախտման հիմքով հարցմանը մասնակցած գերատեսչություններում իրականացվել է ծառայողական 203 քննություն, ևս 10 վարույթ հարուցել է Հանձնաժողովը: Իրականացված քննություններից 144-ը իրականացվել է նույն գերատեսչությունում: Արդյունքում 63 ծառայող ենթարկվել են «նկատողություն» պատասխանատվության, 37-ը՝ «խիստ նկատողություն», 46-ը՝ «ծառայության դադարեցում» կարգապահական տույժի, 4 ծառայող՝ «պաշտոնային դրույքաչափի իջեցում», 1 ծառայող՝ «կոչման իջեցում մեկ աստիճանով»:

Հաջորդ գերատեսչությունում իրականացված ծառայողական 4 քննության արդյունքում կարգապահական տույժ է կիրառվել 6 ծառայողների նկատմամբ: Անցկացված ծառայողական քննությունների արդյունքում նշանակվել են 2 «զգուշացում», 1 «նկատողություն», 2 «խիստ նկատողություն», 1 «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» տույժերը: Մեկ այլ գերատեսչությունում՝ վարքագծի կանոնների խախտման հիմքով իրականացված ծառայողական 21 քննության արդյունքում 11 ծառայող ենթարկվել է «նախազգուշացում» կարգապահական տույժի, 7 ծառայող՝ «նկատողություն» կարգապահական տույժի, 2 ծառայող

ենթարկվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժի և 1 ծառայող՝ «ծառայության դադարեցում» կարգապահական տույժի: Հաջորդ գերատեսչության դեպքում կիրառվել է 6 «նախազգուշացում», 10 «նկատողություն», 1 «խիստ նկատողություն», մյուս գերատեսչության դեպքում՝ 2 քննության արդյունքում՝ 1-ին՝ «փորձաշրջանը չանցած», 2-րդին՝ «նկատողություն»: Եվս մեկ գերատեսչությունում վարքագծի կանոնների խախտման հիմքով իրականացված ծառայողական 7 քննության արդյունքում ծառայողներից 1-ը ենթարկվել է «նկատողություն» կարգապահական տույժի, 1-ը՝ «ծառայությունից արձակում», 1-ը՝ «նախազգուշացում», 3-ը՝ «խիստ նկատողություն», 1 դեպքում ծառայողական քննությամբ տույժ չի կիրառվել՝ ծառայողի՝ աշխատանքից ազատման հիմքով: Գերատեսչություններից մեկի դեպքում ծառայողական 3 քննության արդյունքում 3 ծառայողի հայտարարվել է «նկատողություն», երկու այլ դեպքում իրականացված ծառայողական քննության արդյունքում կիրառվել է «խիստ նկատողություն» տույժը: Վարքագծի կանոնների խախտում քննության արդյունքում չի հայտնաբերվել 1 գերատեսչությունում, ըստ այդմ՝ տույժ չի կիրառվել: Տույժ չի կիրառվել նաև վերջին գերատեսչությունում:

Շահերի բախման կարգավորումների խախտումների հիմքով հարցմանը մասնակցած հանրային իշխանության մարմիններից միայն երկուսում են իրականացվել ծառայողական քննություններ: Առաջին գերատեսչությունում իրականացվել է ծառայողական 1 քննություն, կիրառվել «խիստ նկատողություն» կարգապահական տույժ, երկրորդ գերատեսչությունում իրականացվել է ծառայողական 4 քննություն, որոնցից 2 դեպքում կարգապահական տույժերից կիրառվել է «նախազգուշացում», մեկական դեպքերում՝ «նկատողություն» և «խիստ նկատողություն»:

Այլ սահմանափակումների խախտման հիմքով սույն հարցմանը մասնակցած հանրային իշխանության մարմիններում չի իրականացվել ծառայողական որևէ քննություն:

Ներկայացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ արձանագրումները՝

- Հանրային իշխանության մարմիններում դեռևս բացակայում են բարեվարքության համակարգի խախտումների քննությունների վերաբերյալ վիճակագրության վարման ներքին մեխանիզմներն ու կարգավորումները, ինչը դժվարեցնում է խախտումների վերաբերյալ տվյալների ամբողջական հավաքագրումը, վերլուծությունը և դրանց հիման վրա քաղաքականությունների մշակումը:
- Չնայած նրան, որ բարեվարքության համակարգին առնչվող խախտումների քննությունների ընդհանուր թիվը նախորդ տարիների համեմատ էապես աճել է, այնուամենայնիվ, պարզ է դարձել, որ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման որոշ մարմիններում ոչ պատշաճ քննություններ են իրականացվել: Մասնավորապես, քննություններն իրականացվել են կարգապահական խախտումների

քննության ընդհանուր կարգով՝ չնայած դրանք քննելու իրավասությունը վերապահված է բացառապես էթիկայի հանձնաժողովներին: Էթիկայի հանձնաժողովից բացի այլ սուբյեկտների (հանձնաժողովի կամ անձանց) կողմից քննությունների անցկացման պրակտիկան իր հերթին բացառում է էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման հիման վրա Հանձնաժողով դիմելու և դրանք բողոքարկելու օրենսդրական հնարավորությունը:

- Միաժամանակ, արձանագրվել են դեպքեր, երբ մարմիններում քննություն է իրականացվել այլ մարմնի սուբյեկտ հանդիսացող անձանց նկատմամբ, ըստ այդմ՝ քննությունները եղել են ոչ իրավաչափ:
- Հարկ է նաև ընդգծել, որ բարեվարքության համակարգի տարրերի խախտումների քննության վերաբերյալ միասնական մոտեցումների բացակայությունը հանգեցնում է իրավակիրառ պրակտիկայի անհամաչափության, ինչն իր հերթին կարող է խաթարել որոշումների կանխատեսելիությունն ու իրավական որոշակիությունը:

Սույն վիճակագրությունը, մեր գնահատմամբ, հանդիսանում է լրացուցիչ ազդակ՝ վարքագծի ոլորտային կանոնների հստակեցման և դրանց միատեսակ կիրառման ապահովման, էթիկայի հանձնաժողովների ձևավորման և արդյունավետ գործունեության երաշխավորման, ինչպես նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի շարունակական կատարելագործման ուղղությամբ օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակներում փոփոխությունների իրականացման համար, որոնք ամրագրված են նաև ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրում:

## 2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

### 2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում և հայտարարագրերի ներկայացման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է գործուն քայլեր իրականացնել հայտարարագրման գործընթացի կանոնակարգման, առկա բացերի վերացման, հայտարարագրերի ներկայացումն առավել սահուն և դյուրին իրականացնելու, չներկայացված (այդ թվում նախորդ տարիների) հայտարարագրերը հավաքագրելու ուղղությամբ: 2025 թվականին համակարգի միջոցով շարունակվել է ավտոմատացված ծանուցումների ուղարկումը տարեկան, պաշտոնական պարտականություններն ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերի ստեղծման

ժամանակ։ Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Համակարգում գրանցված գործող պաշտոնատար անձանց թիվը կազմել է 6,190։

Հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարիներին ներկայացման ենթակա, սակայն չներկայացված հայտարարագրեի առնչությամբ Հանձնաժողովից ելքագրվել են 2,057 գրավոր ծանուցումներ։ Ծանուցումներն ուղարկելուն զուգահեռ հայտարարատուները հայտարարագիր ներկայացնելու պարտականության մասին տեղեկացվել են նաև հեռախոսազանգերի միջոցով։

Իրականացված գործողությունների արդյունքում համապատասխան հայտարարագրերի մի մասը ներկայացվել է մինչև վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելը, իսկ մնացած մասով նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ։

Այսպիսով, 2025 թվականի ընթացքում Հանձնաժողովի ռեսուրսները մեծամասամբ ուղղվել են նախորդ ժամանակահատվածներում չներկայացված հայտարարագրերի ներկայացման գործընթացի ապահովմանը։ Արդյունքում, 2025 թվականի ընթացքում հավաքագրվել է 21,627 հայտարարագիր, որն ավելի է դրան նախորդող՝ 2024 թվականի համեմատությամբ 7.7%-ով, իսկ 2023 թվականի համեմատությամբ՝ 26.1%-ով։

Հայտարարագրերի ներկայացման միտումները վերջին 3 տարիների ընթացքում ներկայացված են ստորև.

2025 թվականին ներկայացված 21,627 հայտարարագրից 17,778-ը եղել է տվյալ տարում ներկայացման ենթակա հայտարարագիր, այսինքն՝ 2024 թվականի տարեկան, ինչպես նաև 2025 թվականին պաշտոնական պարտականությունները ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերը, իսկ մնացած 3,849-ը՝ նախորդ տարիներին ներկայացման ենթակա հայտարարագիր: Այսինքն, 2025 թվականին ներկայացված հայտարարագրերի 17.8%-ը ենթակա է եղել ներկայացման նախորդ ժամանակահատվածներում:

Ստորև ներկայացված է 2025 թվականին փաստացի ներկայացված հայտարարագրերի տոկոսային բաշխումը՝ ըստ 2025 թվականին և նախորդ տարիներին ներկայացման ենթակա լինելու.




Ինչ վերաբերում է պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից 2025 թվականին ներկայացման ենթակա 2024 թվականի տարեկան հայտարարագրերն օրենքով սահմանված ժամկետում ներկայացնելուն, ապա արձանագրվում է, որ 2025 թվականի ընթացքում ներկայացման ենթակա հայտարարագրերի չներկայացման դեպքերն էապես նվազել են։ Ստորև ներկայացված է պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից օրենքով սահմանված ժամկետում տարեկան հայտարարագրերի չներկայացման ցուցանիշների փոփոխությունը 2023-2025 թվականներին։




Միաժամանակ արձանագրվում է, որ արդեն 31.12.2025 թվականի դրությամբ 2024 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող 22 պաշտոնատար անձի և 422 ընտանիքի անդամների կողմից 2024 թվականի տարեկան հայտարարագրերը ներկայացված են եղել:

Մյուս դեպքերում, երբ Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա և մինչև գործի քննության ավարտը հայտարարատուները չեն ներկայացրել օրենքով պահանջվող հայտարարագրերը, Հանձնաժողովը կայացրել է վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ (վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների մասով մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 6-րդ բաժնում): Նման որոշումների՝ անբողոքարկելի դառնլուց հետո՝ 30 օրվա ընթացքում, օրենքով պահանջվող հայտարարագրերը չներկայացնելու հիմքով Հանձնաժողովը գործի նյութերն ուղարկել է Գլխավոր դատախազություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան գործողություններն իրականացնելու համար: Նշված հիմքով Գլխավոր դատախազություն ուղարկված գործերի թիվը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 13:

Հայտարարագիր ներկայացնելու պահանջների պահպանվածության ստուգման գործառույթի շրջանակում պաշտոնատար անձի ընտանիքի կազմը բացահայտելու նպատակով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքից բխող գործողություններ իրականացնելու նպատակով 2 դիմում է ներկայացվել իրավասու մարմին, որոնցից մեկի մասով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ապահովել է հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ 783 ուղղման դիմումի ընթացք, որոնք վերաբերել են 1724 հայտարարագրերում հայտարարագրված տվյալների փոփոխությանը: Նշված դիմումներից 15-ը մերժվել են, քանի որ դիմումում նշված անհամապատասխանությունները Հանձնաժողովի կողմից այլ կերպ բացահայտված են եղել:

### *2.2 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ*

2025 թվականի մայիսի 29-ին «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն է կատարվել, որոնք ուժի մեջ են մտել 2025 թվականի հուլիսի 4-ից: Սահմանվել է, որ կրիպտոակտիվների դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ կրիպտոակտիվի անվանումը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն (գործարքը կրիպտոակտիվների առևտրային հարթակում կնքված լինելու դեպքում՝ հարթակի օպերատորի անվանումը):

Վերոնշյալ օրենսդրական փոփոխությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովի կողմից իրականացվել են ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքներ, մասնավորապես մշակվել են «ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 102-Ն» և «ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 306-Ն» որոշումների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծերը՝ ապահովելու կրիպտոակտիվների վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալների ներառումը հայտարարագրի համապատասխան ձևանմուշներում: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ որոշումների նախագծերը ներկայացվել են ՀՀ Կառավարության քննարկմանը:

Վերոնշյալից զատ, Հանձնաժողովը մշակել է «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչներ սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագիծը: Նախագիծը սահմանում է հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչների համակարգ, ներառյալ դրանց քանակական (միավորային) գնահատման մեթոդաբանությունը և ռիսկի ցուցանիշների նվազագույն շեմը, որի դեպքում հայտարարագիրը ենթակա է վերլուծության:

Ռիսկային չափորոշիչները ներառում են ինչպես ավտոմատ հաշվարկվող ցուցանիշներ (օր.՝ ընթացիկ տարեկան ծախսերի բացասական մեծություն, կանխիկ միջոցների առկայություն համադրված այլ հանգամանքների հետ և այլն), այնպես էլ լրացուցիչ ռիսկի գործոններ, որոնք կարող են յուրաքանչյուր դեպքում առանձին գնահատվել

իրավասու ստորաբաժանման կողմից՝ հիմնվելով փաստական տվյալների և հայտարարատուի ընդհանուր գույքային դրության վրա։

Կարգավորումը նաև սահմանում է ռիսկային ցուցանիշների հիման վրա ամենամյա վերլուծության ենթակա հայտարարատուների և հայտարարագրերի ցանկի ձևավորման մեխանիզմը, ներառյալ ինքնաշխատ կերպով արտահանվող ցուցակների օգտագործումը։ Որոշման նախագիծն ուղարկվել է պետահիրավական փորձաքննության. նախատեսվում է ընդունել 2026 թվականի 1-ին կիսամյակում: Որրոշման նախագիծն ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիքներ ներկայացնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ամփոփվել են շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքները:

### *2.3 Աջակցություն հայտարարատուներին*

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում Հանձնաժողովը հայտարարագրման գործընթացի վերաբերյալ հայտարարատուներին աջակցություն է տրամադրել հետևյալ գործիքներով.

1. Հայտարարագրման գործընթացի իրազեկման միջոցառումների իրականացում՝ մարզային 12 այցելություններ, ինչպես նաև առցանց 17 հանդիպումներ,
2. contact@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ստացվել է շուրջ 650 գրավոր հարցում,
3. Հեռախոսազանգերի թիվը կազմել է շուրջ 10,000,
4. Համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով ստացվել է 137 գրավոր հարցում,
5. Գործարկվել է Chatwoot հարթակը, որի միջոցով հայտարարատուներին տրամադրվել է անհրաժեշտ օգնություն:




## 3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 3.1 Հայտարարագրերի վերլուծություն

Պաշտոնատար անձանց գույքային դրության թափանցիկության ապահովման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի վերհանման և զսպման նպատակով, Հանձնաժողովը՝ հաշվետու ժամանակահատվածում շարունակել է հայտարարագրերի վերլուծության գործընթացը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված կարգով, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող ԶԼՄ հրապարակումների և ֆիզիկական անձանց դիմումների հիման վրա նախաձեռնված համապատասխան անձանց հայտարարագրերի վերլուծությունների իրականացման գործընթացը:

Իրականացված վերլուծությունների և ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում՝ հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է **173** հայտարարատուների **709** հայտարարագրի վերլուծություն, որից՝

- **150** հայտարարատուի **578** հայտարարագրի վերլուծությունն ավարտվել է գույքային դրության արժանահավատության վերաբերյալ կասկածները փարատվելու (այդ թվում՝ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների

անարժանահավատությունը հիմնավորող բավարար հիմքերի բացակայության), ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքերի բացակայության հանգամանքներով պայմանավորված: Վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատու անձանց առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում,

- 2 պաշտոնատար անձի և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերի վերլուծություն ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ նրանցից հայցված և ներկայացված (կամ չներկայացրած) պարզաբանումների գնահատման վերաբերյալ տվյալները փոխանցվել են Գլխավոր դատախազություն:

Իրականացված վերլուծությունների ընթացքում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների առնչությամբ որոշ դեպքերով պաշտոնատար անձանց և ընտանիքի անդամների, ինչպես նաև հայտարարատուի՝ սեփականության իրավունքով գրանցված գույքից տարբերվող, նրա կողմից գույքի փաստացի տիրապետվող, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի՝ նրա անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերման կամ նրա կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալու կամ այդ գույքի տնօրինելու հանգամանքների առկայությունը ստուգելու վերաբերյալ տեղեկություններ են ուղարկվել համապատասխան մարմին՝ իրականացնելու «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքից բխող գործողություններ՝ հնարավոր հանցագործությունները հայտնաբերելու և կանխելու նպատակով:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված վերլուծությունների ընթացքում երկու դեպքով Հանձնաժողովի որոշման հիման վրա կայացվել է իրավիճակային հայտարարագրեր ներկայացնելու պահանջի մասին որոշում:

- **1** անձի նկատմամբ նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ,
- **20** հայտարարատուի առնչությամբ **9** հաղորդում է ներկայացվել Գլխավոր դատախազություն:

Գլխավոր դատախազություն ուղարկված հաղորդումներից առաջինը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում անկախ պետական մարմնի նախկին անդամի և նրա ընտանիքի 4 անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված և վերլուծության առարկա հանդիսացող հայտարարագրերում հայտարարագրված կանխիկ դրամական

միջոցների ծագման աղբյուրների առնչությամբ վերջիններից հայցված և ստացված պարզաբանումների գնահատումների արդյունքում Հանձնաժողովի կասկածների չփարատվելուն, ինչպիսի հիմքով էլ համապատասխան հաղորդումը 5 հայտարարատուի առնչությամբ ուղարկվել է Գլխավոր դատախազություն։

*Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում 3 դրվագով նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1-ին հոդվածի հիմքով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածին), որը սակայն հետագայում կարճվել է՝ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը հաստատված լինելու հիմքով։*

Հաղորդումներից երկրորդը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում դատավորի և նրա կնոջ կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծության (համալիր վերլուծություն) արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված այն կասկածին, որ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձին պատկանում է տրանսպորտի միջոց, որը ձեռք է բերվել պաշտոնատար անձի անունից, օգտին կամ հաշվին, կամ որը փաստացի տիրապետվում է հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձին պատկանում է տրանսպորտի միջոց, որը ձեռք է բերվել պաշտոնատար անձի անունից, օգտին կամ հաշվին, կամ որը փաստացի տիրապետվում է հայտարարատու պաշտոնատար անձի կողմից։ Այս վերլուծության ընթացքում Հանձնաժողովի կասկածները փարատելու նպատակով Հանձնաժողովը այդ անձից պահանջել է Հանձնաժողով ներկայացնել իրավիճակային հայտարարագիր, որի վերլուծության արդյունքում Հանձնաժողովի մտահոգությունները չեն փարատվել։ Ավելին, հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերում առկա տվյալների վերլուծությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ առկա է գույքի փոփոխության՝ օրինական եկամուտներով չհիմնավորվելու դեպք, որը նույնպես ներառվել է հաղորդման մեջ։ Միաժամանակ, դատավորի նկատմամբ Հանձնաժողովը հարուցել է կարգապահական վարույթ և դիմել Բարձրագույն դատական խորհուրդ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ։

*Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ և 444-րդ հոդվածների հիմքով։ Նկատի ունենալով դեպքի առթիվ քրեական վարույթ նախաձեռնված լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովը միջնորդել է Բարձրագույն դատական խորհրդին՝*

*կասեցնելու կարգապահական վարույթի քննությունը մինչև քրեական գործի հանգուցալուծումը, որը բավարարվել է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:*

Հաղորդումներից երրորդը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում դատավորի և նրա կնոջ կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծության (համալիր վերլուծություն) արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված այն կասկածներին, որ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կողմից նվիրատվությամբ ստացված դրամական միջոցների ծագման աղբյուրները կասկածելի էին և չեն հիմնավորվել ներկայացված պարզաբանումներով, միաժամանակ հայտարարատուի՝ կանխիկ դրամական մուտքերը բանկային հաշիվներին չեն հիմնավորվել ստացված եկամուտներով և հայտարարագրված դրամական միջոցներով, արդյունքում գույքերի փոփոխությունը չի հիմնավորվել օրինական եկամուտներով: Նկատի ունենալով, որ արձանագրվածը վերաբերել է ընտանիքի անդամին և ուղղակիորեն չի առնչվել դատավորի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերին, հետևաբար և դատավորի վարքագծին, ուստի վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

*Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի հիմքով:*

Հաղորդումներից չորրորդը վերաբերել է մամուլի հրապարակման հիման վրա համայնքի ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծության (համալիր վերլուծություն) արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված կասկածներին առ այն, որ բանկային հաշիվների շարժերը չէին համապատասխանում հայտարարագրված եկամուտներին, գույքերի փոփոխությունը չէր հիմնավորվում հայտարարագրված դրամական միջոցներով և օրինական եկամուտներով: Վերը նշված և այլ հարցերի շուրջ Հանձնաժողովի կողմից հայցվել են պարզաբանումներ, որոնք չենք ներկայացվել Հանձնաժողով, ինչի արդյունքում Հանձնաժողովի կասկածները չեն փարատվել և գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն:

*Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի հիմքով:*

Հաղորդումներից հինգերորդը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում դատավորի և նրա ընտանիքի կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծության (համալիր վերլուծություն) արդյունքում Հանձնաժողովի մոտ ձևավորված այն կասկածներին, որ հայտարարատուի և նրա

ընտանիքի անդամի նվիրատվությամբ ստացված անշարժ գույքերի ծագման աղբյուրները կասկածելի էին և չեն հիմնավորվել ներկայացված փաստարկներով, ինչպես նաև ընտանիքի անդամի հայտարարագրված դրամական միջոցների ծագման աղբյուրները ևս չեն հիմնավորվել ներկայացված փաստարկներով, որի արդյունքում Հանձնաժողովի կասկածները չեն փարատվել և ներկայացվել է հաղորդում:

*Հանձնաժողովի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի հիմքով:*

Հաղորդումներից վեցերորդը վերաբերել է ԶԼՄ հրապարակման հիման վրա Հանձնաժողովի կողմից նախաձեռնված պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի վերլուծությանը, որի ընթացքում Հանձնաժողովի մոտ առկա հիմնական կասկածն այն էր, որ առկա կանխիկ դրամական միջոցները չեն հիմնավորվում հայտարարագրված օրինական եկամուտներով, ինչի առնչությամբ հայցվել էր պարզաբանումներ և բանկային հաշիվների քաղվածքներ, որոնք ամբողջությամբ Հանձնաժողով չէին ներկայացվել: Արդյունքում, ձևավորված կասկածների և պահանջվող պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ոչ ամբողջական ծավալով տրամադրմամբ պայմանավորված գործի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն:

*Հանձնաժողովի հաղորդման հիման վրա քրեական վարույթ չի նախաձեռնվել, իսկ այլ վարույթ նախաձեռնված լինելու մասին Հանձնաժողովը տեղեկություններ չունի: Քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ կազմված արձանագրությունը Հանձնաժողովի կողմից չի բողոքարկվել, քանի որ Հանձնաժողովի գնահատմամբ հարցի լուծումը պահանջում է օրենսդրական փոփոխությունների իրականացում: Նշվածի առնչությամբ Հանձնաժողովը նախաձեռնել է իրավասու մարմինների հետ աշխատանքային քննարկումներ:*

Գլխավոր դատախազություն ներկայացված հաղորդումներից յոթերորդը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում նախկին դատավորի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում գույքային դրության վերաբերյալ տվյալների արժանահավատության և ամբողջականության առնչությամբ Հանձնաժողովի մոտ ձևավորված ողջամիտ կասկածներին՝ առ այն, որ անձի գույքի ավելացումը չի հիմնավորվում օրինական եկամուտներով, ինչպես նաև տարեկան ծախսը կազմել էր բացասական մեծություն, ինչպիսի պայմաններում առկա էր կասկած չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված տվյալների առնչությամբ:

*Այդ հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով:*

Գլխավոր դատախազություն ներկայացված հաղորդումներից ութերորդը վերաբերել է մամուլի հրապարակման հիման վրա համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված խնդիրներին: Մասնավորապես, հայտարարատուի գույքի, ինչպես նաև բանկային հաշիվներով իրականացված գործարքների օրինականության, հայտարարագրերում առերևույթ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված տվյալների, ինչպես նաև չբացահայտված եկամուտների աղբյուրների առկայության առնչությամբ ներկայացված պարզաբանումների արդյունքում Հանձնաժողովի կասկածները չեն փարատվել:

*Հանձնաժողովի՝ վերոնշյալ հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով:*

Գլխավոր դատախազություն ներկայացված հաղորդումներից իններորդը վերաբերել է մամուլի հրապարակման հիման վրա համայնքի ավագանու անդամի պաշտոնը զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ ներկայացված պարզաբանումների արդյունքում Հանձնաժողովի կասկածների չփարատվելուն: Մասնավորապես, բանկային հաշիվների շարժերը համադրելի չեն եղել հայտարարագրված եկամուտների հետ, գույքերի փոփոխությունը չի հիմնավորվել հայտարարագրված դրամական միջոցներով և օրինական եկամուտներով: Բացի այդ, պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերում հայտարարագրված տվյալների հիման վրա հաշվարկված ընթացիկ տարեկան ծախսը կազմել է բացասական մեծություն: Միաժամանակ, տվյալ պաշտոնատար անձի միջոցով իրականացվել են համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի ձեռքբերման գործարքներ, թաքցվել են դրանց ձեռքբերման գումարների ծագման աղբյուրների և իրական շահառուների վերաբերյալ տվյալները: Մասնավորապես, տվյալ համայնքի ղեկավարի ընտանիքի դրամական միջոցների հաշվին ձեռք են բերվել վերոնշյալ գույքերը, որոնք հետագայում օտարվել են համայնքի ղեկավարի ընտանիքի անդամին:

*Հանձնաժողովի վերոնշյալ հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ:*

### *3.2 Հայտարարագրերի ստուգում*

*ԶԼՄ հրապարակումների, անձանց գրավոր դիմումների, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման բարեվարքության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների և կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների հիմքով*

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացված ԶԼՄ մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված 66 հրապարակումներում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների հիման վրա Հանձնաժողովի կողմից իրականացվել է 174 հայտարարատու անձի (116 պաշտոնատար անձի և 58 ընտանիքի անդամ) հայտարարագրերի ստուգում:

Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են դրան նախորդող ժամանակահատվածում կատարված հրապարակումների հիման վրա նախաձեռնված ստուգումները:

Իրականացվել է նաև անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման և բարեվարքության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, առերևույթ սխալ կամ ոչ ամբողջական հայտարարագրված տվյալների վերաբերյալ ստուգում, որոնցից 79-ն ավարտվել է հաշվետու ժամանակաշրջանում:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել և ավարտվել է նաև կուսակցությունների հաշվետվությունների ստուգման արդյունքում 7 հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի ուսումնասիրության գործընթացը:

Ընթացիկ մյուս ուսումնասիրությունների առնչությամբ հայտարարատուներից հայցվել են պարզաբանումներ, ինչպես նաև հանձնաժողովը տեղեկատվության պահանջով դիմել է պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց, ինչպիսի տեղեկությունները դեռևս չեն ստացվել կամ գնահատման փուլում են:

Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում ԶԼՄ հրապարակումների հիման վրա ավարտվել է 240 հայտարարատուի վերաբերյալ 754 հայտարարագրում համապատասխան տվյալների ստուգում, որոնց արդյունքում

- **194** դեպքով հայտարարատուների նկատմամբ հետագա գործընթաց չի նախաձեռնվել՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելը, Հանձնաժողովի կասկածների փարատված լինելու հանգամանքը, ինչպես

նաև հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայությունը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատուներին առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումներ,

- **14** դեպքով Հանձնաժողովը որոշել է իրականացնել հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծություն (համալիր վերլուծություն),
- **35** դեպքով նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ, որոնցից 35-ն էլ եզրափակվել են հաշվետու ժամանակահատվածում: Եզրափակված վարույթներից
  - **19**-ի դեպքում կիրառվել են 200,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժեր,
  - **6**-ի դեպքում հայտարարվել է բանավոր դիտողություն՝ կարճելով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթները՝ հիմք ընդունելով իրավախախտման նվազ նշանակությունը,
  - **1** դեպքով հայտարարվել է նախազգուշացում,
  - **7**-ի դեպքում ընդունվել են վարչական վարույթները կարճելու որոշումներ՝ պայմանավորված վարչական իրավախախտման դեպքի բացակայությամբ,
  - **2** դեպքով որոշում չի կայացվել՝ պայմանավորված Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցությամբ,
- **2** դեպքով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հանձնաժողովում իրականացվում է այդ հայտարարատուների հայտարարագրերի վերլուծություն, ուսումնասիրության արդյունքները ներառվել և քննարկվել են հայտարարագրերի վերլուծության շրջանակում:
- **1** դեպքով Հանձնաժողովը հաղորդում է ներկայացրել համապատասխան մարմին՝ հիմք ընդունելով այն փաստը, որ պաշտոնատար անձի կողմից նույն անձին օտարվել են գույքեր, որի օրինական եկամուտների և նրա կողմից ձեռքբերված գույքերի ընդհանուր արժեքների միջև առկա են եղել էական շեղումներ: Բացի այդ, հաշվի առնելով գնորդի և պաշտոնատար անձի միջև առկա հնարավոր կապերը, ինչպես նաև օրինական եկամուտներով գույքերի ձեռքբերումների չհիմնավորելը՝ Հանձնաժողովը գտել է, որ օտարման գործարքները պարունակում են օրինականության ռիսկեր: Արդյունքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից նախաձեռնվել է վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 285րդ հոդվածի հատկանիշներով:

## 4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

### *4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ*

2025 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը:

««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝

- Կուսակցությունները պարտավոր են հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը ներկայացնել Հանձնաժողով մինչև հաջորդ տարվա փետրվարի 20-ը,
- նվազեցվել է կուսակցությունների վարչական բեռը, մասնավորապես կուսակցությունները այլևս չեն ներկայացնի աուդիտի կազմակերպման համար նախնական տեղեկություններ, ինչպես նաև չեն հրապարակի իրենց հաշվետվությունները azdarar.am կայքում, այլ Հանձնաժողովը կապահովի դրանց հրապարակումը Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.cpcarmenia.am-ում՝ առանձին բաժնում տեղադրելու միջոցով,
- փոփոխվել են կուսակցությունների կողմից ստացվող նվիրատվությունների առավելագույն չափերը, ներդրվել են նպատակային ֆինանսավորման տրամադրման նոր մեխանիզմներ:

Վերոգրյալ օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ իրականացվել են նաև համապատասխան փոփոխություններ ենթաօրենսդրական ակտերում, մասնավորապես՝

1. 2025 թվականի օգոստոսի 2-ին ուժի մեջ է մտել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 02-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 03-Ն որոշումը: Իրականացված փոփոխությունների և լրացումների արդյունքում պարզեցվել է աուդիտորական կազմակերպությունների ընտրության մրցութային գործընթացը, նվազեցվել է մի քանի կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման համար միևնույն կազմակերպության կողմից հաղթող ճանաչվելու հավանականությունը՝ ապահովելով անցկացվող մրցույթի արդյունավետությունը, թափանցիկությունը, ինչպես նաև ավելի լայն մասնակցայնության հնարավորությունը:

2. 2025 թվականի նոյեմբերի 7-ին ուժի մեջ է մտել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 04-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 04-Ն որոշումը: Իրականացված փոփոխությունների արդյունքում պարզեցվել և բարելավվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունները Հանձնաժողով ներկայացնելու գործընթացը: Փոփոխությունների արդյունքում սահմանվել են՝
   - էլեկտրոնային համակարգի միջոցով կուսակցությունների տարեկան հաշվետվությունները ներկայացնելու ընթացակարգերը,
   - հաշվետվությունն էլեկտրոնային համակարգով ներկայացնելու անհնարինության դեպքում թղթային եղանակով ներկայացնելու ընթացակարգը,
   - տարեկան հաշվետվության ձևում ավելացվել են համապատասխան բաժիններ, ինչը հնարավորություն կստեղծի, որ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների «Մուտքեր Ելքեր» թերթում առկա «Այլ մուտքեր» և «Այլ ելքեր» տողերը լրացնելիս նաև ներկայացվեն դրանց առանձին բացվածքները,
   - նվիրատուների դեպքում՝ կլրացվեն նաև նվիրատուների հայրանունները (առկայության դեպքում), որը կլինի հրապարակային տվյալ,
   - տարեկան հաշվետվության ձևից հանվել է հետազոտությունների մասին աղյուսակը,
   - բնեղենով նվիրատվությունների հաշվարկման արդյունավետությունից ելնելով՝ սահմանվել է, որ տարեկան հաշվետվությամբ կներկայացվեն անշարժ գույքը կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու վերաբերյալ բոլոր տվյալները, այդ թվում՝ գույքի վարձակալության կամ օգտագործման մակերեսը և տևողությունը:
3. Մշակվել է «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման կարգը սահմանելու մասին» որոշման նախագիծը, որը դրվել է հանրային քննարկման և ուղարկվել շահագրգիռ մարմիններին՝ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս չեն ստացվել ամբողջական առաջարկությունները: Ստուգման կարգի հաստատումը հնարավորություն կտա ապահովել Հանձնաժողովի վերահսկողական գործառույթների իրականացումը, բոլոր կուսակցությունների դեպքում կիրառելով նույն սկզբունքը, ինչպես նաև բարձրացնել կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների ստուգման ամբողջականությունը և

արժանահավատությունը։ Այն նպատակ ունի ապահովել օրենքով սահմանված վերահսկողական լիազորությունների գործնական իրագործումը՝ հստակեցնելով ստուգման իրականացման հիմքերը, փուլերը, մեթոդները, տվյալների հավաքագրման և գնահատման կարգը։

4. Մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» N 03-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը, որը շրջանառվել է և իրականացվում են ստացված կարծիքների ամփոփումները։ Կարծիքների ամփոփումից հետո որոշման նախագիծն ուղարկվել է պետահիրավական փորձաքննության։ Նախագծով առաջարկվող փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2025 թվականի մայիսի 29-ին ընդունված ՀՕ-174-Ն օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 102-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2025 թվականի մայիսի 29-ի N 666-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների կիրարկումը համապատասխան հայտարարագրերի ձևանմուշների հաստատման միջոցով հնարավորություն ստեղծել հայտարարատու պաշտոնատար անձի համար օրենքով պահանջվող տվյալները հայտարարագրելու և հայտարարագրելուց հետո դրանց հրապարակայնությունն ապահովելու համար։ Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս չի ստացվել պետահիրավական փորձաքննության արդյունքները։

Բացի այդ, Հանձնաժողովը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծերի փաթեթում ներառելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացրել մի շարք օրենսդրական կարգավորումներ։ Մասնավորապես, Հանձնաժողովի առաջարկով կուսակցություններին նվիրատվություններ կատարած անձանցից իրավիճակային հայտարարագրեր պահանջելու, հաշվետվության ստուգման ժամանակ օպերատիվ հետախուզական տեղեկություններ ձեռք բերելու նպատակով իրավասու մարմիններին դիմելու լիազորությունների օրենսդրությամբ ամրագրման, կուսակցությունների կողմից կանխիկ դրամական միջոցների՝ խոշոր չափերով շրջանառության քրեականացման, ինչպես նաև մի շարք այլ կարգավորումներ։

### *4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ*

2024 թվականի հունվարի 29-ին Հանձնաժողովն ընդունել է *«Կուսակցությունների՝ հաշվետու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման նպատակով ներկայացվող անհրաժեշտ տեղեկությունների ցանկը, ձևաթուղթը և ժամկետները սահմանելու մասին»* N 01-Ն որոշումը, համաձայն որի՝ կուսակցություններն անհրաժեշտ տեղեկությունները ներկայացնում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 31-ը: Հանձնաժողով ներկայացված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ բացի պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցություններից («Քաղաքացիական պայմանագիր», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն» և «Վերածնվող Հայաստան»), հաշվետու տարվա ընթացքում կուսակցության մուտքերը կամ ելքերն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը գերազանցելու հիմքով աուդիտի ենթակա են նաև՝ «Հայաստանի Հանրապետական» և «Հայրենիք» կուսակցությունների տարեկան հաշվետվությունները:

Հանձնաժողովի կողմից հայտարարվել է մրցույթ՝ 7 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով: Սահմանված ընթացակարգով մրցույթի արդյունքում վերջնական հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ կնքվել են աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Կնքված պայմանագրերի հիման վրա՝ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրվել են պետական ֆինանսավորման և պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների՝ 2024 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունները, որոնք հիմք են հանդիսացել պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման համար:

### *4.3 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ*

### *4.3.1 Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներ*

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի համատեքստում Հանձնաժողովն իրականացրել է պետական ֆինանսավորման ենթակա՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն» և «Վերածնվող Հայաստան» կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգումը, ինչի շրջանակներում անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր են հայցվել կուսակցություններից, որոնք համադրվել են պետական մարմիններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև կուսակցությունների տարեկան հաշվետվություններով ներկայացված տվյալների հետ: Ստուգման համար, ի թիվս վերոնշյալի, հիմք են հանդիսացել նաև աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունները:

Պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում վարչական կամ քրեական իրավախախտման վերաբերյալ դեպքեր չեն հայտնաբերվել: Միաժամանակ, ստուգմամբ հայտնաբերված սխալ կամ ոչ ամբողջական տվյալները շտկելու նպատակով՝ կուսակցություններին տրամադրվել է ժամկետ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու համար: Պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվություններում կատարվել են համապատասխան շտկումներ և ներկայացրել են պարզաբանումներ, որոնք գնահատվել են Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

Հանձնաժողովի կողմից իրականացված՝ պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների՝ 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում ընդունվել են պետական նպատակային ֆինանսավորում տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին համապատասխան որոշումներ՝ հիմք ընդունելով Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-8-րդ մասերը: Այդ որոշումների համաձայն՝ պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցություններին տրամադրվել են նպատակային ֆինանսավորումներ, հետևյալ սահմանաչափերով՝

| **Կուսակցության անվանում** | **Տրամադրվող նպատակային ֆինանսավորում** | **Տրամադրվող նպատակային** |
|---|---|---|

| | | **ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)** |
|---|---|---|
| «Քաղաքացիական պայմանագիր» | կեսը | 26,830,900 |
| «Հայ յեղափոխական դաշնակցություն» | կեսը | 16,322,100 |
| «Վերածնվող Հայաստան» | կեսը | |
| «Բարգավաճ Հայաստան» | 3/4 | 7,566,600 |
| «Հանրապետություն» | ամբողջը | 7,751,600 |

«Վերածնվող Հայաստան» և «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները հանդես են գալիս «Հայաստան» դաշինքի ներքո և 2024 թվականին «Վերածնվող Հայաստան» կուսակցությանը չի հատկացվել պետական նպատակային ֆինանսավորում, քանի որ «Հայաստան» դաշինքի 2024 թվականի դեկտեմբերի 11ին N 11/12/2024 որոշման համաձայն 32,644,000 ՀՀ դրամ պետական նպատակային ֆինանսավորումը հատկացվել է «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը:

Այսպիսով, պետական ֆինանսավորում ստացող 5 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգմամբ ընդունվել են որոշումներ՝ նպատակային ֆինանսավորումը մասամբ կամ ամբողջությամբ տրամադրելու հիմքերի առկայության մասին:

«Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության 2024 թվականի տարեկան հաշվետվության ստուգման ընթացքում պարզվել է, որ կուսակցությանը պատկանող երեք անշարժ գույքեր հանձնվել են վարձակալության՝ 3,550,000 ՀՀ դրամով, ուստի հիմք ընդունելով Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթները՝ «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության պետական ֆինանսավորումը նվազեցվել է 3,550,000 ՀՀ դրամի չափով:

### *4.3.2 Պետական ֆինանսավորման ոչ ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներ*

2025 թվականի հունվարի 1-ից հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գործարկվել է կուսակցությունների տարեկան հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու բաղադրիչը, ինչով պայմանավորված՝ նախաձեռնվել են նախորդ տարիներին կուսակցությունների կողմից հանձնված տարեկան հաշվետվությունների թվայնացման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մուտքագրումների ընթացքում ի հայտ են եկել մի շարք անհամապատասխանություններ և վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող դեպքեր, որոնց հիման վրա Հանձնաժողովի կողմից նախաձեռնվել են առանձին կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումներ: Այս համատեքստում, ինչպես նաև մամուլից ստացված տեղեկությունների հիման վրա ստուգման գործընթաց է նախաձեռնվել ևս 13 կուսակցությունների տարեկան հաշվետվությունների.

- «Համահայկական ճակատ» կուսակցության 2024 թվականի,
- «Ազատ դեմոկրատներ» կուսակցության 2024 թվականի,
- «Ազգային օրակարգ» կուսակցության 2022-2024 թվականների,
- «Ռամկավար ազատական» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Շանթ դաշինք ազգայնական» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Հայաստանի Հանրապետական» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Գործարար» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Ապրելու երկիր» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Հաղթանակ» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Հայրենիք» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Հայաստանի եվրոպական» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Ուժը հայրենյաց» կուսակցության 2023-2024 թվականների տարեկան

հաշվետվությունները:

Ստուգումների արդյունքում Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի համաձայն՝ *Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու* դեպքի առթիվ նախաձեռնվել է 2 վարույթ՝ «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցությանը նվիրատվություն կատարած «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի և «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ի գործադիր մարմինների ղեկավարների նկատմամբ: Վերջիններիս նկատմամբ ընդունվել է վարչական տույժ կիրառելու վերաբերյալ որոշում կատարած նվիրատվությունների չափով:

Մյուս կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում կուսակցություններին ուղարկվել են գրություններ տարեկան հաշվետվություններում շտկումներ կատարելու և ըստ անհրաժեշտության՝ պարզաբանումներ տրամադրելու համար, որոնց գնահատման արդյունքում ըստ անհրաժեշտության կնախաձեռնվեն համապատասխան գործողություններ:

### *4.4 Կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում*

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ուսումնասիրություն՝ պարզելու կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունները Սահմանադրական օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով ներկայացնելու պահանջների պահպանվածությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 123 կուսակցություններից Հանձնաժողով չեն ներկայացվել 12 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունները: 12 կուսակցություններից 2-ը մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնելը (համապատասխան գրությունների ելքագրումը) Հանձնաժողով են ներկայացրել 2024 թվականի տարեկան հաշվետվությունները, իսկ 10 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ նախաձեռնվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.13-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Այդ կուսակցություններն են՝

1. «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ»,
2. «Ազգային համաձայնություն»,
3. «Ազգային ժողովրդավարների դաշինք»,

4. «Միացյալ Քրիստոնյա Հայաստան»,

5. «Արժանապատիվ ապագա»,

6. «Հայազն»,

7. «Միավորում հանուն Հայաստանի»,

8. «Ազգի ձայն»,

9. «Հայրենատէր»,

10. «Հայք լիբերալ» կուսակցությունները:

Վերոնշյալ կուսակցություններից՝ «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ», «Ազգային ժողովրդավարների դաշինք», «Արժանապատիվ ապագա» կուսակցությունների պարագայում ընդունվել են կարճման վերաբերյալ որոշումներ՝ խախտումը որակելով նվազ նշանակության՝ մինչև գործի քննությունը խախտումը վերացնելու և հաշվետու տարում կուսակցության ֆինանսական գործունեություն չծավալելու հանգամանքով պայմանավորված, իսկ մյուս 7 կուսակցությունների դեպքում՝ ընդունվել են վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ՝ հաշվի առնելով, որ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը խախտումը չի վերացվել:

Վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո 4 կուսակցությունների նկատմամբ նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, այն է՝ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, հաշվետվությունը կրկին չներկայացնելը: Այդ կուսակցություններն են՝

1. «Միավորում հանուն Հայաստանի»,

2.«Հայենատէր»,

3.«Ազգային համաձայնություն»,

4. «Ազգի ձայն»,

որոնցից առաջին 3-ի դեպքում ընդունվել են վարչական տույժ կիրառելու վերաբերյալ որոշումներ, իսկ «Ազգի ձայն» կուսակցության դեպքում ընդունվել է բանավոր դիտողություն հայտարարելով վարչական իրավախախտման վարույթը կարճելու վերաբերյալ որոշում, քանի որ մինչև գործի քննության ավարտը պահանջվող հաշվետվությունը ներկայացվել է Հանձնաժողով:

Այսպիսով, հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ 123 կուսակցություններից 119 կուսակցություններ ներկայացրել են իրենց 2024 թվականի տարեկան հաշվետվությունները, իսկ 4 կուսակցություններ *(«Միավորում հանուն Հայաստանի», «Հայք լիբերալ» «Հայրենատէր» և «Ազգային համաձայնություն»*) Սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չեն ներկայացրել իրենց 2024 թվականի տարեկան հաշվետվությունները:

### *4.5 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների և ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի ներկայացման գործընթաց*

2025 թվականի հունվարի 1-ից ներդրվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման բաղադրիչը և անցում է կատարվել հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգի: Կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում՝ այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի՝ էլեկտրոնային նոր համակարգի միջոցով ներկայացման բաղադրիչը նույնպես ներդրված է, որի միջոցով իրականացվել է 2024 թվականի տարեկան հայտարարագրերի ներկայացումը:

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրման էլեկտրոնային համակարգ են մուտքագրվել՝ կուսակցությունների ղեկավար մարմինների 664 անդամների վերաբերյալ տվյալներ, որոնցից 345-ը օրենքով սահմանված ժամկետում ներկայացրել են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2024 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիր, իսկ 170-ը օրենքով սահմանված ժամկետից հետո են ներկայացրել իրենց տարեկան հայտարարագիրը: Այսպիսով, հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող 664 հայտարարատու անձանցից 515-ը ներկայացրել են հայտարարագրերը, իսկ 149-ը՝ ոչ:

Սահմանադրական օրենքով սահմանված կարգով կուսակցությունների կողմից Հանձնաժողով ներկայացված կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ համապատասխան տեղեկությունների հիման վրա հաշվետու ժամանակահատվածում պաշտոնական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող 91 անձանցից 65-ը ներկայացրել են հայտարարագրերը, իսկ 26-ը՝ ոչ: Պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիր

ներկայացնելու պարտականություն ունեցող 47 անձանցից հայտարարագիր ներկայացրել են 19-ը, իսկ 28-ը՝ ոչ:

Վերը նշվածով պայմանավորված՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը օրենքով սահմանված ժամկետում չկատարած հայտարարատուները ծանուցվել են այդ մասին: Ծանուցման արդյունքում 86 հայտարարատուներ ներկայացրել են 166 հայտարարագրեր, իսկ պատշաճ ծանուցված համարվելուց հետո 30-օրյա ժամկետում հայտարարագրերը չներկայացնելու հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի հիմքով կազմվել են 20 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ:

Կուսակցությունների ղեկավար կազմի կողմից հայտարարագրերն էլեկտրոնային համակարգով ներկայացնելու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով՝ Հանձնաժողովի կողմից 44 կուսակցություն ծանուցվել է Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում սահմանված պարտավորության կատարման մասին, ըստ որի՝ *Կուսակցությունն իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը:*

Կուսակցություններից 35-ը պատշաճ ծանուցվել են, որոնցից 28-ը ծանուցմամբ նշված ժամկետում Հանձնաժողով են ներկայացրել անհրաժեշտ տեղեկությունները, իսկ 7 կուսակցությունների պաշտոնատար անձինք պատշաճ ծանուցված լինելով հանդերձ, սահմանված ժամկետում Հանձնաժողով չեն ներկայացրել կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ համապատասխան տեղեկությունները, որոնց նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ: Վերոնշյալ 7 կուսակցություններից՝ «Հայկական երազանք» և «Ամբերդ» կուսակցությունները պահանջվող տեղեկատվությունը մինչև գործի քննության ավարտը ներկայացրել են, ինչպիսի հիմքով այդ կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ հայտարարվել է բանավոր դիտողություն, և ընդունվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու մասին որոշումներ, իսկ «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ», «Հայկական վերածնունդ», «Ինքնիշխան Հայաստան», «Հայաստանի սոցիալական արդարություն» կուսակցությունների պարագայում՝ որոշում է կայացվել վարչական տույժ կիրառելու մասին, «Նոր Վանաձոր» կուսակցության դեպքում որոշում չի

ընդունվել՝ պայմանավորված Հանձնաժողովի անդամների ձայների[6] հարաբերակցությամբ։

Չծանուցված կուսակցություններից 7-ի դեպքում՝ Հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում չի ստացել ուղարկված գրավոր ծանուցումը ստացած լինելու մասին հավաստումը, իսկ 2 կուսակցությունների դեպքում՝ ծանուցումը վերադարձվել է, ուստի համապատասխան ընթացակարգով ծանուցումները տեղադրվել են ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ուղարկվել են համայնքների ղեկավարներին՝ առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի դրույթներով: Իրականացված գործողությունների արդյունքում «Համահայկական ճակատ» և «Ժողովրդավարություն և աշխատանք» կուսակցություններից ստացվել են պահանջվող տեղեկությունները, մինչդեռ մյուս 7 կուսակցությունների դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ ծանուցումը azdarar.am կայքում տեղադրելուն հաջորդող 5-րդ օրը, օրենքի ուժով համարվել է հանձնված (ստացված), ուստի ծանուցված համարվելուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը, կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ և նախապատրաստվել են նյութեր գործերի քննության համար: Արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների քանակը կազմել է 14, որոնցից 9-ի՝ «Ազգի ձայն», «Քրիստոնյա-Ժողովրդական վերածնունդ», «Հայկական վերածնունդ», «Ինքնիշխան Հայաստան», «Հայաստանի սոցիալական արդարություն», «Միավորում հանուն Հայաստանի», «Հայք լիբերալ», «Համախմբում», «Միասնական հայրենիք» կուսակցությունների նկատմամբ կայացվել են վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ, իսկ «Արժանապատիվ ապագա», «Հայկական երազանք» և «Ամբերդ» կուսակցությունների՝ պարագայում ընդունվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթները կարճելու մասին որոշումներ, իսկ 2-ի՝ «Նոր Վանաձոր» և «Ժողովրդավարական ուղի» կուսակցությունների պարագայում որոշում առկա չէ՝ պայմանավորված Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցությամբ։

[6] Կուսակցության կողմից տրամադրվել է քաղվածք լուծարման գործընթաց սկսելու մասին, իսկ ղեկավար կազմի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվել են միայն կուսակցության նախագահի մասով՝ չնայած մինչև լուծարման գործընթացի ավարտը հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը շարունակում է պահպանվել:

### *4.6 Նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների նախապատրաստում և հրապարակում*

Համաձայն «ՀՀ Ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասի՝ *«Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մինչև քվեարկությունից հետո՝ երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների) բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերը ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համացանցային կայքում»: Այս գործառույթի համատեքստում Հանձնաժողովը Վաղարշապատի ՏԻՄ ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ապահովվել է կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների նախապատրաստում և հրապարակում Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակում՝ 3-օրյա ռեժիմով:*

Հանձնաժողովին վերապահված վերոգրյալ գործառույթի համատեքստում՝ Վաղարշապատի ՏԻՄ ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է 8 տեղեկանք, որոնցից յուրաքանչյուրը ներառել է տեղեկություններ ընտրություններին մասնակցող 9 կուսակցությունների («Մայր Հայաստան ազգային-դեմոկրատական», «Հայրենիք», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր», «Առաջ աջակենտրոն», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Ազատ դեմոկրատներ», «Ժառանգություն», «Համահայկական ճակատ») բանկային հաշիվների վերաբերյալ:

ՀՀ առևտրային բանկերից ստացված տեղեկությունների հիման վրա՝ հրապարակվել են կուսակցությունների մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները, դրանց տեսակը, յուրաքանչյուր գործարքի գումարի չափը (ՀՀ դրամով), համապատասխան գործարքի նկարագրությունը, ինչպես նաև բանկային հաշվի մնացորդը՝ տեղեկանքը հրապարակելու ամսաթվի դրությամբ:

## *5.ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

### *5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ*

Հանձնաժողովը **2025** թվականի ընթացքում պետական պաշտոններում նշանակվել հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության լիազորության շրջանակներում իրականացրել է թվով **650** անձանց բարեվարքության ուսումնասիրություն և թվով **103** անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել ընդհանուր թվով **753** խորհրդատվական բնույթի եզրակացություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ներկայացված թվով **753** եզրակացություններից **654**-ը եղել են դրական, **79**-ը՝ բացասական: Թվով **20** անձի բարեվարքության վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

Հանձնաժողովը 2025 թվականին իրականացված բարեվարքության ուսումնասիրության արդյունքներով գույքային դրության առնչությամբ ձևավորված հիմնավոր կասկածի հիման վրա Գլխավոր դատախազություն է ներկայացրել թվով 4 հաղորդում՝ գույքի ավելացման և կատարված ծախսերի՝ օրինական եկամուտներով հիմնավորվելու, ինչպես նաև Թեկնածուի կողմից կատարված գործարքների օրինականության առնչությամբ:




Ներկայացված եզրակացություններից՝

- 1-ը վերաբերել է **Սահմանադրական դատարանի** դատավորի թեկնածուին,
- 4-ը **Բարձրագույն դատական խորհրդի** անդամի թեկնածուներին,
- 3-ը՝ **Վճռաբեկ դատարանում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 14-ը՝ **Վերաքննիչ դատարաններում** դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 38-ը՝ **դատավորների թեկնածուների հավակնորդներին**,
- 2-ը՝ **Գլխավոր դատախազի տեղակալին,**
- 170-ը՝ **դատախազների թեկնածությունների ցուցակում** ընդգրկվել հավակնող անձանց,
- 53-ը՝ **դատախազների առաջխաղացման ցուցակում** ընդգրկվել հավակնող դատախազներին,
- 6-ը՝ **Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի**
- 1-ը՝ **Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի** թեկնածուի

- 21-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **օպերատիվ-հետախուզական** գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց,
- 23-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **ինքնավար պաշտոնները** համալրել հավակնող անձանց,
- 13-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **ինքնավար պաշտոններ զբաղեցնող, առաջխաղացման ենթական** անձանց,
- 1-ը՝ **Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի** թեկնածուին,
- 77-ը՝ **Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, առաջխաղացման** ենթակա անձանց,
- 223-ը՝ **Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների** ցուցակում ընդգրկել հավակնող անձանց
- 20-ը՝ **ընթացիկ** ուսումնասիրություն անցնելու պարտավորություն ունեցող **դատավորներին**
- 26-ը՝ **ընթացիկ** ուսումնասիրություն անցնելու պարտավորություն ունեցող **դատախազներին**
- 57-ը՝ **ընթացիկ** ուսումնասիրություն անցնելու պարտավորություն ունեցող **քննիչներին**



Բարեվարքության եզրակացությունների հիման վրա կատարված **նշանակումների** վերաբերյալ թվային տվյալները ներկայացված են հաշվետվություն ներկայացնելու օրվա դրությամբ համապատասխան իրավասու մարմնի կողմից ստացված տեղեկատվության համաձայն:




**Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությունների վերաբերյալ տեղեկատվությունը, անձանց նույնականացումը բացառելու նպատակով, ներկայացվում է **Բարձրագույն դատական խորհրդի անդամի և Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությունների թվի հետ ընդհանրացված՝ հաշվի առնելով վերջիններիս ոչ մեծ թվաքանակը:

**Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների** ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց, **Բարձրագույն դատական խորհրդի անդամի** և **Սահմանադրական դատարանի դատավորների** թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **8** եզրակացություններից **5**-ը եղել են դրական, որոնցից **4**-ն ընդգրկվել, այնուհետև նշանակվել են պաշտոններում, թվով **3**-ը բացասական, որից 2-ը ընդգրկվել են ցուցակում, **1**-ը նշանակվել է պաշտոնում:




**Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **14** եզրակացություններից **12**-ը եղել են դրական, թվով 7 թեկնածու ընդգրկվել են առաջխաղացման ցուցակներում, որից թվով 1-ը նշանակվել է համապատասխան պաշտոնում, թվով **2**-ը՝ բացասական, որից 1-ն ընդգրկվել է ցուցակում: Նշանակումների վերաբերյալ տեղեկություն առկա չէ:



**Դատավորների թեկնածուների** հավակնորդների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **38** եզրակացություններից **32**-ը եղել են դրական, ընդգրկվել են թվով 10-ը, **4**-ը՝ բացասական, ցուցակում ընդգրկվելու և նշանակումների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, թվով **2** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Նշանակումների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:






**Դատախազների թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **170** եզրակացություններից **150**-ը եղել են դրական, թվով **43** թեկնածու ընդգրկվել է համապատասխան ցուցակում, որից պաշտոնում նշանակվել են թվով **39**-ը, թվով **16**-ը՝ բացասական, որից թվով **1**-ը ընդգրկվել է ցուցակում, այնուհետև նշանակվել պաշտոնում: Թվով **4** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թվով **3** թեկնածու ընդգրկվել են ցուցակում, որից **2**-ը նշանակվել են պաշտոնում:




**Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **53** եզրակացություններից **48**-ը եղել են դրական, թվով **47** թեկնածու ընդգրկվել են առաջխաղացման ցուցակներում, այնուհետև նշանակվել են համապատասխան պաշտոններում, **4**-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել և նշանակվել է պաշտոնում թվով **3** թեկնածու: Թվով **1** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թեկնածուն նշանակվել է համապատասխան պաշտոնում:







Հաշվի առնելով **Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների և նախագահի տեղակալի թեկնածուների** ոչ մեծ թվաքանակը, անձի նույնականացումը բացառելու նպատակով, արդյունքները ներկայացվում են ընդհանրացված.

**Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների և նախագահի տեղակալի թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **7** եզրակացություններից **5**-ը

եղել են դրական, որից թվով **2**-ը նշանակվել են համապատասխան պաշտոններում, **2**-ը՝ բացասական, բացասական եզրակացությամբ նշանակումներ առկա չեն:

**Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **23** եզրակացություններից **21**-ը եղել են դրական, որից թվով **19**-ը նշանակվել են պաշտոնում, **1**-ը բացասական, բացասական եզրակացությամբ նշանակումներ առկա չեն: Թվով **1** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թեկնածուն չի նշանակվել պաշտոնում:




**Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **7** եզրակացություններից **6**-ը եղել են դրական, որից թվով **4**-ը նշանակվել է պաշտոնում, **1**-ը՝ բացասական, թեկնածուն չի նշանակվել պաշտոնում:







Հաշվի առնելով **Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածուների** ոչ մեծ թվաքանակը, անձի նույնականացումը բացառելու նպատակով, **Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի և Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության եզրկացությունների արդյունքները ներկայացվում են ընդհանրացված.

**Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի և Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **78**

եզրակացություններից **67**-ը եղել են դրական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են **66**-ը, նշանակվել՝ թվով **63** թեկնածու, **8**-ը բացասական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել, այնուհետև պաշտոնում նշանակվել են **5**-ը: Թվով **3** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թեկնածուները ընդգրկվել են առաջխաղացման ցուցակում, այնուհետև նշանակվել պաշտոնում:




**Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող թեկնածուների** վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **223** եզրակացություններից **196**-ը եղել են դրական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են **149**-ը, թվով **117** թեկնածու նշանակվել է պաշտոնում, **24**-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել են **10**-ը, այնուհետև թվով **8** թեկնածու նշանակվել է պաշտոնում: Թվով **3** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թեկնածուներից 2-ը ընդգրկվել են թեկնածությունների ցուցակում, այնուհետև նշանակվել են պաշտոնում:




### *5.2 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ*




2025 թվականի ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է ընդհանուր թվով **103** անձի բարեվարքության վերաբերյալ ***ընթացիկ ուսումնասիրություն,*** Ներկայացված **103** եզրակացություններից՝ **88**-ը եղել են դրական, **9**-ը՝ բացասական: Թվով **6** անձի

բարեվարքության վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

**Քննչական կոմիտե** ներկայացված թվով **57** եզրակացություններից **50**-ը եղել են դրական, 4-ը բացասական: Բացասական եզրակացությունների հիման իրականացված ծառայողական քննությունների արդյունքում թեկնածուների վերաբերյալ եզրակացություններում նշված հանգամանքները պարզաբանվել են, նախնական ուսումնասիրությունը դադարեցվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառով, թվով **3** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

**Գլխավոր դատախազություն** ներկայացված թվով **26** եզրակացություններից **25**-ը եղել են դրական, 1-ը բացասական:

Բացասական եզրակացության հիման վրա իրականացված ծառայողական քննության արդյունքում ընդունվել է հարուցված կարգապահական վարույթի նյութերը ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի քննարկմանը չներկայացնելու մասին որոշում:

**Դատական դեպարտամենտ** ներկայացված թվով **20** եզրակացություններից **13**-ը եղել են դրական, 4-ը բացասական, թվով **3** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

Թվով **4** բացասական եզրակացություններից **1**-ը ուղարկվել է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով՝ օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքն ապահովելու նպատակով: Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը ընդունել է դատավորի նկատմամբ վարքագծի կանոնների առերևույթ խախտման հանգամանքների բացակայության հիմքով կարգապահական վարույթ չհարուցելու մասին որոշում: Թվով **3** դատավորի նկատմամբ Հանձնաժողովը որոշել է կարգապահական վարույթ չհարուցել, հաշվի առնելով, որ

- թվով 1 դատավորի բարեվարքության գնահատականի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոն է հանդիսացել վերջինիս ամուսնու կողմից երբևէ հայտարարագրեր չներկայացնելու հանգամանքը, որպիսի պայմաններում Հանձնաժողովի գնահատմամբ բացակայում է դատավորի կողմից վարքագծի կանոնների խախտման առնչությամբ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենքով նախատեսված հիմքը,

- մյուս **2** դատավորների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովի կողմից մինչ այդ իրականացված հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում վերջիններիս նկատմամբ արդեն իսկ հարուցվել է կարգապահական վարույթ և կարգապահական վարույթ հարուցելու համար հիմք են հանդիսացել վերոնշյալ դատավորների բարեվարքության գնահատականի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնները:

### *5.3 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի արդյունքում ներկայացված եզրակացությունների հիման վրա ներկայացված հաղորդումներ և զեկուցագրեր*

Հանձնաժողովը 2025 թվականին ընթացքում իրականացված բարեվարքության ուսումնասիրության արդյունքներով գույքային դրության առնչությամբ ձևավորված հիմնավոր կասկածի հիման վրա, Գլխավոր դատախազություն է ներկայացրել թվով **4** հաղորդում՝ գույքի ավելացման և կատարված ծախսերի՝ օրինական եկամուտներով հիմնավորվելու, Թեկնածուի կողմից կատարված գործարքների օրինականության, ինչպես նաև նշված գործողությունների՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակելու առնչությամբ Հանձնաժողովի մոտ առկա կասկածների առնչությամբ:

Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում հայտարարագրերի վերլուծության ընթացքում բացահայտված խնդիրների առնչությամբ 2025 թվականին ընթացքում կազմվել և համապատասխան ստորաբաժանում է ներկայացվել թվով **167** զեկուցագիր՝ հետագա գործընթացը կազմակերպելու նպատակով:

## *6.* ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

2025 թվականին Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում շարունակել է վարույթների իրականացումը: Հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովի կողմից ընդհանուր առմամբ իրականացվել են թվով 661 վարույթներ, որից՝

ՎԻՎ օրենսգրքով նախատեսված՝ 644 վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ.

- Հայտարարագիր չներկայացնելու հիմքով՝ 512 վարույթ,
- Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն չներկայացնելու հիմքով՝ 16 վարույթ,
- Կուսակցությունների հաշվետվությունները չներկայացնելու հիմքով՝ 18 վարույթ,
- Կուսակցությունների կողմից պաշտոնատար անձանց ռեեստրը չներակայացնելու հիմքով՝ 11 վարույթ,
- Հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու իրավախախտման հիմքով՝ 80 վարույթ,
- Հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու հիմքով՝ 1 վարույթ,
- Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու իրավախախտման հիմքով՝ 3 վարույթ,
- Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու իրավախախտման հիմքով՝ 1 վարույթ,
- Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվություններն օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու իրավախախտման հիմքով՝ 2 վարույթ,
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված՝ 17 վարույթ.
- Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների վերաբերյալ՝ 4 վարույթ,
- Վարքագծի կանոնների առերևույթ խախտումների վերաբերյալ՝ 10 վարույթ,
- Առերևույթ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ՝ 2 վարույթ,
- Այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ՝ 1 վարույթ:

Հանձնաժողովի կողմից 2024 և 2025 թվականներին իրականացված վարույթների համեմատական վերլուծության արդյունքում արձանագրվել է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում իրականացված ՎԻՎ օրենսգրքով նախատեսված

վարույթների արդյունքային ցուցանիշների փոփոխություն: Մասնավորապես՝ 2024 թվականին իրականացվել է 761 վարույթ, իսկ 2025 թվականին՝ 649 վարույթ: Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների արդյունքում կիրառված պատասխանատվության միջոցների քանակը 2024 թվականին կազմել է 98, իսկ 2025 թվականին՝ 115:

Հարկ է նշել, որ իրականացված վարույթների արդյունքում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կիրառվել է ընդհանուր առմամբ 24,360,000.00 ՀՀ դրամի չափով վարչական տույժ: Հաշվետու ժամանակահատվածում պետությանը հատուցվել է ընդհանուր առմամբ՝ 16,731,205.00 ՀՀ դրամ: Կիրառված տույժերի և պետությանը հատուցված գումարների տարբերությունը դեռևս չի բռնագանձվել, քանի որ չեն լրացել հարկադիր կատարման ուղարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետները:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված վարույթների քանակը ինչպես 2024 թվականին, այնպես էլ 2025 թվականին կազմել է 17:

2025 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների և եզրակացությունների վերաբերյալ ՀՀ վարչական դատարան է ներկայացվել թվով 17 հայցադիմում, որոնցից 9-ը ընդունվել է վարույթ դատարանի կողմից: Դրանցից 8-ը գտնվում է ընթացիկ քննության փուլում, 1-ը կարճվել է՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով: Ներկայացված հայցադիմումներից 4-ի վերաբերյալ ՀՀ վարչական դատարանի կողմից կայացվել է և ուժի մեջ է մտել «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշում, իսկ 4-ի վերաբերյալ կայացվել է և ուժի մեջ է մտել «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում:

Նախորդ տարիներից 2025 թվական է փոխանցվել Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների և եզրակացությունների վերաբերյալ ներկայացված հայցադիմումների հիման վրա ՀՀ վարչական դատարանում կամ վերադաս դատարաններում քննվող 16 գործ, որոնցից 13-ը գտնվում են ընթացիկ քննության փուլում, 1-ը կարճվել է՝ հայցը ժամկետի խախտումով դատարան ներկայացնելու հիմքով, 1-ով՝ Հանձնաժողովի կողմից նոր երևան եկած հանգամանքով ՀՀ վարչական դատարանի որոշման վերանայման դիմում է ներկայացվել Վերաքննիչ վարչական դատարան, որը վերադարձվել է: Նշված որոշումը բողոքարկվել է Վճռաբեկ դատարան, և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է: 1-ով՝ վարչական տույժ կիրառելու մասին Հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու պահանջը մերժվել է ՀՀ վարչական դատարանի կողմից: Նշված որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվել է և վճիռը թողնվել է անփոփոխ:

## *7. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը կոռուպցիայի կանխարգելման կարևոր գործիք է, որը նպատակ ունի բացահայտել այն գործոնները, որոնք կարող են նպաստել կոռուպցիոն դրսևորումների առաջացմանը: Այդ գործընթացը հնարավորություն է տալիս մշակել նպատակային միջոցառումներ՝ ուղղված վարչարարության արդյունավետության բարձրացմանը, թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդմանը, ինչպես նաև բարեվարքության մշակույթի զարգացմանը:

Սույն բաժնում ամփոփ ներկայացվում են 2025 թվականին այդ ուղղությամբ Հանձնաժողովի կողմից իրականացված հիմնական աշխատանքներն ու նախաձեռնությունները:

2025 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովն ամփոփել և հրապարակել է «Հայաստանում անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգում կոռուպցիոն ռիսկերի գնահատում» զեկույցը[7], որտեղ ներկայացված են փորձնական կիրառված մեթոդաբանության հիմքերը, գնահատման չափորոշիչները և գործիքակազմը, ինչպես նաև ձևավորված առաջարկություններ՝ բացահայտված կոռուպցիոն ռիսկերի զսպման և կանխարգելման նպատակով:

Վերհանված ռիսկերը խմբավորվել են հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. *Իրավական որոշակիության խնդիրներ*, մասնավորապես՝ ուղեգրման գործընթացում կիրառվող եզրույթների (օրինակ՝ «կայուն խանգարում», «տևական բուժում պահանջող հիվանդություն») ոչ միանշանակ մեկնաբանությունների, ինչպես նաև ուղեգրման վերաբերյալ որոշումների մերժման և բողոքարկման կարգի հստակեցման անհրաժեշտության առնչությամբ:

2. *Տեղեկատվության մատչելիության և իրազեկվածության սահմանափակումներ*, որոնք վերաբերում են ուղեգրման, ֆունկցիոնալության գնահատման, բողոքարկման գործընթացներին: Արձանագրվել է, որ շահառուները հաճախ տեղեկանում են իրենց իրավունքներին և կիրառվող ընթացակարգերին ոչ համակարգային աղբյուրներով, ինչը կարող է նվազեցնել գործընթացների հասանելիությունը, կանխատեսելիությունն ու վստահությունը համակարգի նկատմամբ:

[7] https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/04/00-1.pdf

3. *Թվայնացմանը զուգընթաց ի հայտ եկող գործնական խնդիրներ,* այդ թվում՝ edisability.am հարթակի մասնակի տեխնիկական հարմարեցվածություն որոշ շահառու խմբերի համար (օրինակ՝ տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձինք), ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող զգայունության հարցեր, որոնք պահանջում են շարունակական գնահատում և վերանայում։

4. *Հանրային մասնակցության և վստահության ամրապնդման անհրաժեշտություն,* մասնավորապես ՀԿ-ների և այլ մասնագիտական կողմերի ներգրավման գործընթացում գրանցված գործնական խոչընդոտների, ինչպես նաև շահառուների շրջանում ձևավորված կոռուպցիոն ընկալումների հնարավոր ազդեցության համատեքստում։

Գնահատման արդյունքներով ձևավորվել են առաջարկներ, որոնք ներկայացվել են ոլորտային պատասխանատու մարմիններին։ Ստացված արձագանքների համաձայն՝ մի շարք ուղղություններով արդեն իսկ իրականացվում են կամ նախատեսվում են միջացառումներ, այդ թվում՝ իրավական ակտերի վերանայում, մասնագիտական վերապատրաստումների իրականացում, մոնիտորինգի նոր գործիքակազմի ներդրում՝ համակարգի օբյեկտիվության վերահսկման նպատակով, շահառուների համար իրազեկման արդյունավետ մեխանիզմների ստեղծում, տեխնիկական հարթակների կատարելագործում՝ հաշվի առնելով ներառականության պահանջները։

2025 թվականի երկրորդ կիսամյակում Հանձնաժողովը շարունակել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ նպատակ ունենալով ձևավորել պետական և համայնքային մարմիններում ու կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման կայուն և ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել դրանց կիրառելիությունն ու շարունակական զարգացումը։

2025 թվականի դեկտեմբերին Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է 2026 թվականի հունվարին), որով առաջարկվում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրում հետևյալ մարմիններում և կազմակերպություններում՝

1. հանրային իշխանության մարմիններում,

2. առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման ոլորտներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում,

3. պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում,

4. հիսուն տոկոս և ավելի պետական և/կամ համայնքային մասնակցություն ունեցող առևտրային կազմակերպություններում։

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման նպատակով Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի կսահմանի գնահատման ենթակա գործընթացները՝ հիմնվելով մեթոդաբանությամբ սահմանված ռիսկայնության չափորոշիչների վրա։ Նման մոտեցումը հնարավորություն կտա ռեսուրսները կենտրոնացնել այն գործընթացների վրա, որոնք օբյեկտիվորեն առավել խոցելի են կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ, և ապահովել դրանց խորքային և փաստահեն վերլուծություն։

Գնահատման շրջանակում Հանձնաժողովն առաջնահերթություն կտա կառավարման արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ վարչարարության պարզեցմանը, հայեցողական որոշումների շրջանակի սահմանափակմանը, թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը, բարեվարքության մշակույթի ամրապնդմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման այլ համակարգային գործոնների զարգացմանը։

Գնահատման արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը իրավասու կլինի գնահատման գործընթացին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել և ստանալ համապատասխան մարմիններից և կազմակերպություններից։

2025 թվականին Հանձնաժողովը պիլոտային ձևաչափով սկսել է կոռուպցիոն ռիսկերի գնահատումներ իրականացնել հինգ խոշոր պետական մասնակցությամբ ընկերություններում՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ում, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ում, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում և «Ջրառ» ՓԲԸ-ում։ Պիլոտային գնահատումները նպատակաուղղված են կիրառվող մեթոդաբանության և գործիքակազմի փորձարկմանը, ինչպես նաև նշված կազմակերպությունների գործարար բարեվարքության համակարգերի ամրապնդմանն ու այդ համակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը։

Գնահատման ընթացքում առանձնացվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. Կառավարման արդյունավետություն և բարեվարքության մշակույթ,
2. Հակակոռուպցիոն քաղաքականություններ և վարքականոններ,
3. Հաշվետվողականություն և թափանցիկություն,
4. Ազդարարման համակարգեր և ազդարարների պաշտպանություն,
5. Ուսուցում, իրազեկում և շարունակական բարելավում։

Նշված ուղղությունների համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա Հանձնաժողովին գնահատել կարգավորող իրավական ակտերում առկա բացերը, թերի կամ ոչ հստակ կարգավորումները, հայեցողական լիազորությունների ծավալն ու դրանց կիրառման վերահսկելիությունը, կառավարման և վերահսկողական մարմինների ձևավորման ընթացակարգերի թափանցիկությունն ու հիմնավորվածությունը, այդ մարմինների գործունեության արդյունավետությունն ու հաշվետվողականության մակարդակը, որոշումների ընդունման գործընթացների թափանցիկությունն ու հիմնավորվածությունը, ինչպես նաև ներքին վերահսկողության, ռիսկերի կառավարման և թվայնացման գործընթացների ներդրման և գործնական կիրառման աստիճանը:

Կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատման նախաձեռնությունը բխում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված 2023–2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունից, որի «Գործարար ոլորտում բարեվարքության ամրապնդում» ռազմավարական ուղղությամբ նախատեսվում է պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրում և զարգացում:

Միաժամանակ նախաձեռնությունը պայմանավորված է նաև ՀՀ միջազգային պարտավորություններով: Մասնավորապես, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ գնահատման զեկույցում ընդգծվել է պետական մասնակցությամբ խոշոր ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման իրականացման, ինչպես նաև տնօրենների խորհուրդների դերի և պատասխանատվության հստակեցման անհրաժեշտությունը:

Կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատումների արդյունքների ամփոփումը նախատեսվում է իրականացնել 2026 թվականին:

## *8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ*

### *8.1 Հակակոռուպցիոն կրթություն*

Պետության հզորացումն ու կայունությունը կառուցվում են յուրաքանչյուր քաղաքացու արժեհամակարգի և պետական մտածողության վրա: Հենց այս գիտակցումով՝ Հանձնաժողովը հակակոռուպցիոն կրթությունը դիտարկում է ոչ թե որպես զուտ տեղեկատվության փոխանցում, այլ որպես բարեվարք քաղաքացու ձևավորման կենսական գործընթաց:

Կոռուպցիայի դեմ պայքարի ամենաարդյունավետ գործիքը իրազեկ ու պահանջատեր հասարակությունն է: Այդ իսկ պատճառով Հանձնաժողովի կրթական նախաձեռնությունները՝ դպրոցական նստարանից մինչև պետական կառավարման համակարգ, միտված են եղել «կոռուպցիան չարիք է» վերացական թեզից անցում կատարելուն դեպի անձնական պատասխանատվություն և գործնական հմտություններ:

Հանձնաժողովի ջանքերն ուղղված են եղել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական մոդելների համադրմանը՝ թիրախավորելով թե՛ պետական համակարգի առանցքը կազմող հանրային ծառայողին, թե՛ ապագա քաղաքացուն՝ ուսանողին և աշակերտին:

Այս համատեքստում՝ կրթական և հանրային իրազեկման միջոցառումներ են իրականացվել հանրային ծառայողների, հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների, բուհերի և մասնագիտական կրթության ուսուցման (ՄԿՈՒ) ուսումնական հաստատությունների դասախոսների և ուսանողների, աշակերտների, ինչպես նաև տարբեր ՔՀԿ և ԶԼՄ ներկայացուցիչների շրջանում՝ նպատակ ունենալով հասարակության մոտ ձևավորել և ամրապնդել կոռուպցիայի նկատմամբ «զրո» հանդուրժողականության մթնոլորտ և զարգացնել մշտական համագործակցային միջավայր պետական մարմինների և հանրության միջև: Այսպես.

**Հանրային ծառայողներ.** Հանրային ծառայողների բարեվարքության և հակակոռուպցիոն գիտելիքների մակարդակը մեծ նշանակություն ունի պետական և հանրային հատվածի փոխվստահության և համագործակցության գործում:

- 2025 ապրիլի 28-ին և 29-ին, Հանձնաժողովի և ՀՀ ՆԳՆ համագործակցության արդյունքում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության, փրկարար ծառայության, միգրացիայի և քաղաքացիության ծառայության 260 ծառայողների համար Հանձնաժողովի կողմից իրականացվել է «Բարեվարքության ինստիտուցիոնալ համակարգը» թեմայով երկօրյա դասընթացը: Դասընթացի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են բարեվարքության համակարգի տարրերը՝ անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները, շահերի բախման կարգավորումները, նվերների ընդունման սահմանափակումները, ինչպես նաև հանրային ծառայողների վարքագծի կանոնները և դրանց մեկնաբանման առանձնահատկությունները:
- Հանձնաժողովի անդամները հոկտեմբերի 17-ին մասնակցել են ՀՀ վարչապետի գլխավորությամբ տեղի ունեցած բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված քննարկմանը: Մասնավորապես, քննարկման առարկա են դարձել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները, նվերներ ընդունելու սահմանափակումները,

անհամատեղելիության պահանջները, շահերի բախումը և այլ սահմանափակումներ՝ պայմանավորված պաշտոնեական պարտականությունների կատարմամբ:

- Հաշվետու ժամանակաշրջանում «Հայտարարագրման համակարգը» թեմայով մի շարք հանդիպումներ են իրականացվել նաև համայնքային ծառայողների շրջանում՝ ներկայացնելով հայտարարագրման համակարգի նպատակը, հայտարարատուների շրջանակը, հայտարարագրերի տեսակներն ու դրանց ներկայացման ժամկետները, հայտարարագրման ենթակա տվյալները, հայտարարագրերի ստուգման և վերլուծության գործընթացները, ինչպես նաև հայտարարագրերի համար կիրառվող պատասխանատվության միջոցները: Հանդիպումներին մասնակցել են շուրջ 500 համայնքային ծառայողներ՝ ՀՀ տարբեր մարզերից:
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 21-ին գործարկել է էլեկտրոնային ուսուցման հարթակ (այսուհետ՝ Ուսուցման հարթակ): Հարթակը ծառայում է որպես Հանձնաժողովի կրթական գործառույթի ապահովման գործիք՝ տրամադրելով բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական մոդուլների, թվային գրադարանի, կրթական ինտերակտիվ լուծումների հասանելիություն: 2025 թվականի ընթացքում Հարթակում հասանելի են եղել 5 դասընթացներ: Դասընթացների ավարտին հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները ստանում են մասնակցությունը հավաստող վկայագրեր: Թեև հարթակը՝ համապատասխան դասընթացներով, գործարկվել է 2025 թվականի առաջին կիսամյակում, հարթակի օգտատերերի թիվը հաշվետու տարվա դեկտեմբերի դրությամբ առաջին կիսամյակի համեմատ աճել է գրեթե 40 անգամ (270 մասնակցից դառնալով շուրջ 10 000):




Ուսուցման հարթակում 2025 թվականին գրանցվել է շուրջ 10,000 անձ, այդ թվում՝ նախարարներ, նախարարի տեղակալի պաշտոն զբաղեցնող անձինք, նախարարի խորհրդականներ, մարզպետներ, համայնքի ղեկավարներ, մարզպետի խորհրդականներ, գլխավոր քարտուղարներ, բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, դատավորներ, քննիչներ, դատախազներ:

Հարթակում հասանելի 5 թեմատիկ դասընթացներին գրանցվել են հետևյալ արդյունքները՝

- «Էթիկական կառավարումը և կոռուպցիայի կանխարգելումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար» դասընթաց՝ 6,682 գրանցված մասնակից, 5,754-ը հաջողությամբ ավարտել է:
- «Շահերի բախումը որպես բարեվարքության համակարգի տարր» դասընթաց՝ 4,010 գրանցված մասնակից, 3,323-ը հաջողությամբ ավարտել է:
- «Գործարար բարեվարքությունը և կոռուպցիոն ռիսկերի կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» 2,818 գրանցված մասնակից, 2,029-ը հաջողությամբ ավարտել է:
- «Կոռուպցիա. կանխարգելման հիմնադրույթները» դասընթաց՝ 2,878 գրանցված մասնակից, 2,252-ը հաջողությամբ ավարտել է:
- Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում» դասընթաց՝ 2,398 գրանցված մասնակից, 1,832-ը հաջողությամբ ավարտել է:

2025 թվականի նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 4-ը Հանձնաժողովը Ուսուցման հարթակում անցկացրել է «Բարեվարքության ճանապարհով» խորագրով առցանց

վիկտորինա, որին մասնակցել է 1,190 անձ: Վիկտորինան նախատեսված էր ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար: Լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները Հանձնաժողովի կողմից արժանացել են հանրային ճանաչման և խրախուսման՝ Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան՝ դեկտեմբերի 9-ին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ: Իսկ բոլոր այն մասնակիցները, ովքեր հաղթահարել են վիկտորինայի անցողիկ շեմը՝ 80 տոկոսը, ստացել են մասնակցության հավաստագրեր:

Հարթակ հնարավոր է մուտք գործել՝ սեղմելով Հանձնաժողովի կայքում զետեղված «Հակակոռուպցիոն կրթություն» կոճակը: Էլեկտրոնային ուսուցման հարթակը գործում է հետևյալ հղումով՝ https://elearning.cpcarmenia.am/:




**Մանկավարժներ.** «Մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրով հանդիպումների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովում իրականացվել են թվով 10 միջոցառումներ՝ Երևանի 32 և մարզերի 18 միջնակարգ դպրոցների հետ: Հանդիպումների ընթացքում մասնակիցները համապարփակ տեղեկատվություն են ստացել կոռուպցիայի դրսևորումների, դրա պատճառների ու հետևանքների, ինչպես նաև հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի և Հանձնաժողովի լիազորությունների վերաբերյալ: Մանկավարժներին ներկայացվել են թեմայի դասավանդման ինտերակտիվ մեթոդներ, իսկ

ծնողներին տրամադրվել է գործիքակազմ՝ երեխաների շրջանում կոռուպցիան մերժող վարքագիծ ձևավորելու համար: Միջոցառումների նպատակն էր **խթանել բարեվարքության արժեքների արմատավորումը կրթական միջավայրում և ընտանիքում**: Մասնակիցները բարձր են գնահատել հանդիպումների ձևաչափը՝ ընդգծելով հետագա փոխհամագործակցության անհրաժեշտությունը: Ծրագրին մասնակցել են 220 մանկավարժներ և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողներ:

Հանձնաժողովը մշակել է «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքություն» վերտառությամբ ուսուցչի ձեռնարկը, որի նպատակն է սովորողների՝ հանրային բարեվարքության համակարգի վերաբերյալ գիտելիքների, հմտությունների և համապատասխան վերաբերմունքի ձևավորումն ու զարգացումը: Ձեռնարկն ուղղված է մանկավարժներին, ովքեր պետք է ձգտեն ոգեշնչել և պատրաստել ապագա սերունդներին՝ ակտիվորեն նպաստելու բարեվարքության, էթիկայի և բարոյականության վրա հիմնված հասարակություն ձևավորելուն, ինչպես նաև օրենքի գերակայության նկատմամբ հարգանք սերմանելուն:

Այս համատեքստում, 2025 թվականի մայիսի 2-ին և 26-ին Հանձնաժողովում, իսկ հունիսի 30-ին՝ Գյումրիում՝ իրականացվել են Ձեռնարկի շուրջ քննարկումներ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների թվով 19 հասարակագիտության ուսուցիչների հետ՝ նպատակ ունենալով քննարկել Ձեռնարկի կիրառելիությունը հակակոռուպցիոն խմբակներում, ինչպես նաև հավաքագրել առաջարկներ և դիտողություններ՝ այն տեղայնացնելու շուրջ:

Ձեռնարկի նախագիծը ներկայացվել է Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ)՝ մասնագիտական կարծիք հայտնելու նպատակով:

**Դասախոսներ.** Հաշվետու ժամանակաշրջանում մի շարք հանդիպումներ են կազմակերպվել նաև բուհական և ՄԿՈՒ ոլորտի դասախոսների հետ: Այս համատեքստում, Հանձնաժողովը, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) հետ համագործակցությամբ, կազմակերպել է «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» թեմայով երկօրյա վերապատրաստումներ Երևան քաղաքի և մարզերի 37 ՄԿՈՒ հաստատությունների թվով 49 դասախոսների հետ: Հանդիպումների նպատակն էր դասախոսներին ծանոթացնել Հանձնաժողովի կողմից մշակված, «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» ձեռնարկի կառուցվածքին, թեմաներին, առաջարկվող գործիքներին և մեթոդներին: Նշված միջոցառումը նախատեսված է եղել նաև ՀՀ 2023-2026 թվականների Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրով:

**ՔՀԿ և ԶԼՄ ներկայացուցիչներ.** Հաշվի առնելով ՔՀԿ և ԶԼՄ ներկայացուցիչների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում՝ վերջիններիս շրջանում ևս իրականացվել են շարունակական վերապատրաստումներ և իրազեկման հանդիպումներ:

Հաշվետու ժամանակահատվածում «Կոռուպցիայի կանխարգելման կարևորությունը և ԿԿՀ-ի դերը» խորագրով հանդիպումներ են կազմակերպվել ՔՀԿ և ԶԼՄ թվով 84 ներկայացուցիչների հետ: Հանդիպումները կազմակերպվել են նախապես իրականացված կարիքի գնահատման արդյունքների հիման վրա, ինչը հնարավորություն է տվել առավել արդյունավետ կերպով անդրադառնալ մասնակիցների ակնկալիքներին, ինչպես նաև ապահովել նպատակային և գործնական քննարկումներ:

ՔՀԿ ներկայացուցիչների հետ համագործակցության շրջանակներում, կազմակերպվել են այցելություններ Հանձնաժողով՝ «Փի Էյչ ինթերնեշնլ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Քաղաքացիական կրթություն» ծրագրի շրջանակներում գործող «Քաղաքացիական մասնակցության ակումբ» խմբակի աշակերտների, «Հոդված 3» մարդու իրավունքների դպրոցի իրավաբան ուսանողների, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից վերապատրաստված, Արմավիրի, Արարատի մարզերի և Երևան քաղաքի մի շարք դպրոցների հասարակագիտության ուսուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում մասնակիցները ծանոթացել են կոռուպցիայի վերաբերյալ ընկալումներին, կոռուպցիայի սահմանմանը, դրսևորումներին, կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությանը, Հանձնաժողովի գործառույթներին և լիազորություններին:

**Երիտասարդներ.** Հանձնաժողովը մեծապես կարևորում է կոռուպցիայի կանխարգելման գործընթացներում երիտասարդության հակակոռուպցիոն կարողությունների զարգացումն ու ակտիվ ներգրավումը: Ինչպես հասարակության բոլոր շերտերը, երիտասարդները նույնպես ենթարկվում են սոցիալական ռիսկերի, ինչպես, օրինակ, կոռուպցիան:

- Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են 16 իրազեկման հանդիպումներ Հայաստանի Հանրապետության բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների շուրջ 148 ուսանողների և հանրակրթական ուսումնական հաստատությունների շուրջ 137 աշակերտների հետ:




Ի կատարումն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի 3-րդ ռազմավարական նպատակի 3.7 գործողության, հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակում տեղադրվել են Հանձնաժողովի կողմից ներկայացված «Ինչպես դասավանդել «Կոռուպցիա» թեման» ուղեցույցը, «Երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» սահիկաշարը, Հանձնաժողովի կողմից պատրաստված իրազեկման հոլովակները, ինչպես նաև Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները և Վարքագծի կանոնագիրքը:

**Այսպիսով, 2025 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպված և անցկացված հանդիպումներին ու միջոցառումներին մասնակցություն են ունեցել շուրջ 10,378 հանրային ծառայողներ, որոնցից 9,578-ը՝ E-learning կրթական հարթակով վերապատրաստում անցածները, Երևան քաղաքի և մարզերի շուրջ 55 դպրոցների 197 մանկավարժներ և 80 ծնողներ, բուհերի, ՄԿՈՒ հաստատությունների և դպրոցների շուրջ 285 ուսանողներ և աշակերտներ, բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների 86 դասախոսներ:**

**Վերապատրաստման դասընթացների արդյունքում հանրային ծառայողները ստացել են ավելի քան 14,000 հավաստագրեր՝ մասնակցելով մեկ կամ մի քանի դասընթացների:**

### *8.2 Հանրային իրազեկվածության բարձրացում, հաղորդակցություն*

2025 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հանրային իրազեկման ծրագրերի իրականացումը՝ ընդգրկելով հանրության լայն շրջանակների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և մասնագիտական համայնքների ներկայացուցիչների: Հանձնաժողովն իրականացրել է իր գործունեության համակարգված լուսաբանում, ապահովել է տեղեկատվության հասանելիությունն ու հրապարակայնությունը, ինչպես նաև հետևողականորեն խթանել է թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների ամրապնդումը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են մի շարք հանրային միջոցառումներ, վերապատրաստումներ, աշխատաժողովներ և իրազեկման

արշավներ։ Հանձնաժողովը հյուրընկալել է ներկայացուցիչների միջազգային կազմակերպություններից, գործընկեր պետական մարմիններից և քաղաքացիական հասարակության կազմակերպություններից։

Հանձնաժողովը, հաշվետու ժամանակահատվածում գործունեությունը լուսաբանելու նպատակով, իր պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան և Լինքդինյան սոցիալական հարթակներում պարբերաբար տեղադրել է Հանձնաժողովի գործունեությանն առնչվող տեղեկատվական և վերլուծական բնույթի նյութեր: Ներկայացվող նյութերը վերաբերել են Հանձնաժողովի գործունեության տարբեր ուղղություններին և իրականացված միջոցառումներին, ընդունված որոշումներին, ընթացիկ ծրագրերին ու ձեռքբերումներին։

Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կայքէջում, Ֆեյսբուքյան և Լինքդինյան էջերում հրապարակված նյութերի վերաբերյալ թվային տվյալներ:




Ըստ գծապատկերի 2025 թվականի ընթացքում Հանձնաժողովի կայքէջում հրապարակվել է 128 հոդված, 642 որոշում և եզրակացություն, Ֆեյսբուքյան էջում՝ 176, իսկ Լինքդինյան էջում 166 հրապարակում:

Ստորև ներկայացված են նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան և լինքդինյան էջերի 2022-2025 թթ-ի հրապարակումների վերաբերյալ համեմատական թվային տվյալներ:




Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է նաև սերտ համագործակցությունը լրատվամիջոցների հետ, կազմակերպվել են մի շարք հարցազրույցներ, քննարկումներ, բանավեճեր:

Հանրային իրազեկման ծրագրերի շրջանակներում, Հանձնաժողովն իր սոցիալական կայքերում հրապարակել է նաև ինֆոգրաֆիկաներ՝ հանրային իրազեկվածության բարձրացման և թափանցիկության ապահովման նպատակով: Դրանցում ներառված են եղել թվային տվյալներ՝ արձանագրված արդյունքների վերաբերյալ:

Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում դեկտեմբերի 10-ին տեղի է ունեցել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Արդարադատության նախարարության համատեղ համաժողովը՝ «Հակակոռուպցիոն ոլորտում 2025 թվականին իրականացված աշխատանքները և առաջիկա անելիքները» խորագրով, որի ընթացքում ամփոփվել են Հանձնաժողովի կողմից 2025 թվականի ընթացքում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում իրականացված

աշխատանքները և ձեռքբերումները: Աշխատաժողովի երկրորդ հատվածում կազմակերպվել է պանելային քննարկում «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների առկա մարտահրավերները և զարգացման հեռանկարները» խորագրով, որի ընթացքում ներկայացվել են Հանձնաժողովի հիմնական մարտահրավերները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրատվամիջոցների հրապարակումները ևս կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ շահերի բախման դեպքի առերևույթ խախտման հատկանիշներ, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ նաև հայտարարագրերի վերլուծության համար, ուստի Հանձնաժողովը օրական երկանգամյա պարբերականությամբ իրականացրել է շուրջ 60 լրատվամիջոցների մամուլի մշտադիտարկում, որի արդյունքում կազմվել է շուրջ 490 տեղեկանք, իսկ Հանձնաժողովի գործառույթներին և լիազորություններին վերաբերելի հրապարակումների վերաբերյալ կազմվել է շուրջ 117 զեկուցագիր:

2025 թվականի սեպտեմբերի 19-ին Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) ամենամյա աշխատանքի տոնավաճառին, որի ընթացքում աշխատանք փնտրող ուսանողներին ներկայացրել են կառույցի գործունեության հիմնական ուղղությունները, առկա թափուր հաստիքները և մասնագիտական զարգացման հնարավորությունները:

Տոնավաճառի նպատակը երիտասարդ մասնագետների և գործատուների միջև արդյունավետ կապերի հաստատման, համագործակցության և մասնագիտական կարիերայի զարգացման համար հարթակի ստեղծումն է:

Ուսանողները ծանոթացել են նաև Հանձնաժողովի կողմից կազմակերպվող կրթական դասընթացներին և պրակտիկայի հնարավորություններին, որոնք նպատակ ունեն խթանելու պետական կառավարման ոլորտում փորձի ձեռքբերմանն ու մասնագիտական հմտությունների զարգացմանը:

Հանձնաժողովը շարունակելու է ջանքեր գործադրել՝ ապահովելու թափանցիկ, պատասխանատու և արդյունավետ կառավարման համակարգ՝ ուղղված կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ու հանրային արժեքների պահպանմանը:

## *9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ*

2025 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է թվայնացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության աշխատանքները, մասնավորապես տարվել են աշխատանքներ դյուրացնելու հայտարարագրման և կուսակցությունների հաշվետվությունների ներկայացման գործընթացները: Համակարգում՝ թե՛ հայտարարագրերի և թե՛ կուսակցությունների հաշվետվությունների ուղղությամբ կատարված բարելավումները վերաբերել են նաև համակարգի ներքին աշխատանքին և աշխատակիցների կողմից տարվող աշխատանքներին:

Հանձնաժողովը դեռևս 2024 թվականից սկսել էր աշխատանքներ տանել նոր գործիքներ և նոր հարթակներ ստեղծելու ուղղությամբ՝ մեծացնելու կապը հայտարարատուների հետ, ինչպես նաև Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով:

2025 թվականի ընթացքում ներդրվել է էլեկտրոնային ուսուցման հարթակ, որը հնարավորություն է տալիս անցնելու վերապատրաստումներ՝ ստանալով հավաստագրեր: Դասընթացները վերաբերում են հակակոռուպցիոն ոլորտին և մշակվել են ոլորտի միջազգային լավագույն օրինակների հիման վրա՝ թույլ տալով օգտվողներին գիտելիքներ ստանալ ոչ միայն հայաստանյան պրակտիկայի, այլև միջազգային փորձի վերաբերյալ:

### *9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ*

- 2025 թվականի ընթացքում Հայտարարագրման էլեկտրոնային համակարգում շարունակվել են կատարելագործման աշխատանքները՝ պետական և մասնավոր տեղեկատվական շտեմարանների ինտեգրման ուղղությամբ: Այդ նպատակով կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի, ինչպես նաև «Աքռա քրեդիտ ռեփորթինգ» ՓԲԸ ներկայացուցիչների հետ՝ համապատասխան տվյալների փոխանակման և Համակարգում ինտեգրման հնարավորությունները քննարկելու նպատակով:
- Համակարգում իրականացվել են մի շարք տեխնիկական բարելավումներ, որոնց շնորհիվ հայտարարատու պաշտոնատար անձանց համար հայտարարագրերի լրացման գործընթացը դարձել է առավել ավտոմատացված և պարզեցված՝

նվազագույնի հասցնելով անզգուշության հետևանքով սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման հնարավորությունը:

- Հանձնաժողովի պաշտոնական կայքում ապահովվել է 2011-2021 թվականների հայտարարագրերի ռեեստրի հասանելիությունը, ինչը նպաստում է տեղեկատվության առավել ամբողջական ներկայացմանը և հրապարակայնության բարձրացմանը:
- Համակարգում գործարկվել է նոր գործիք՝ Chatwoot հարթակը, որը հնարավորություն է տալիս օգտատերերին հարցերի միջոցով ստանալ տեղեկություն հայտարարագրերի լրացման կարգի, ինչպես նաև տեխնիկական խնդիրների պարզաբանման և լուծման վերաբերյալ: Նոր գործիքը նպաստում է օգտատերերի և Հանձնաժողովի միջև հաղորդակցության արագացմանը և արդյունավետության բարձրացմանը և հասանելի է հայտարարագրման էլեկտրոնային համակարգի գլխավոր էջում:

### *9.2 Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ*

- Աշխատանքներ են տարվել 2024 թվականին գործարկված Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակի բարելավման ուղղությամբ՝ նպատակ ունենալով ապահովել կուսակցությունների ֆինանսական գործունեության առավել թափանցիկ ներկայացումը: Մասնավորապես, ապահովվել է կուսակցությունների հաշվետվություններում փոփոխություններ կատարելու հնարավորությունը՝ հայտարարագրման էլեկտրոնային համակարգում կիրառվող մեխանիզմների համանման եղանակով:
- Հանձնաժողովը՝ ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի (IFES) և Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ, գործարկել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ռեեստրը, որը հնարավորություն է տալիս ստանալ տեղեկություն կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև առկա գույքի վերաբերյալ՝ նպաստելով կուսակցությունների ֆինանսական թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը:
- Հաշվետու տարվա ընթացքում փոփոխվել է կուսակցությունների տարեկան հաշվետվության ձևաչափը, որը կիրառվելու է 2025 թվականի տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամանակ:

Չնայած կատարված աշխատանքներին՝ Հանձնաժողովը չի կարողացել ավարտին հասցնել իր առջև դրված որոշ նախաձեռնություններ՝ պայմանավորված արտաքին գործոններով և օրենսդրական փոփոխություններով, մասնավորապես դոնոր կազմակերպության՝ ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունների դադարեցմամբ՝ համաձայն ԱՄՆ նախագահի 2025 թվականի հունվարի 27-ի հրամանագրի: Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ դադարեցվել են նվերների ռեեստրի կառուցման և բարեվարքության հարցաթերթիկների թվայնացման աշխատանքները:

Այդ նպատակով 2025 թվականի սեպտեմբերի 20-ին Հանձնաժողովը Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի նիստում ներկայացրել է Հանձնաժողովի թվայնացման օրակարգը և ստացել Խորհրդի դրական եզրակացությունը:

Հանձնաժողովի 2025 թվականի թվայնացման աշխատանքները վկայում են համակարգերի շարունակական զարգացման և արդեն ներդրված թվային լուծումների կատարելագործման ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքի մասին: Հայտարարագրման էլեկտրոնային համակարգում իրականացված տեխնիկական բարելավումները, նոր գործիքների ներդրումը, ինչպես նաև կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակի կատարելագործումը նպաստել են համակարգերի առավել արդյունավետ գործարկմանը, տվյալների ներկայացման գործընթացի պարզեցմանը և տեղեկատվության հասանելիության բարձրացմանը:

## *10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ*

Հանձնաժողովը՝ կարևորելով միջազգային համագործակցության նշանակությունը իր գործունեության և գործառույթների արդյունավետ իրականացման համար, 2025 թվականի ընթացքում շարունակել է ակտիվ փոխգործակցությունը միջազգային գործընկերների հետ: Այդ շրջանակում Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են արտասահմանյան գործընկերների կողմից կազմակերպված տարբեր միջոցառումների, Հանձնաժողովում հյուրընկալվել են միջազգային գործընկերներ, ինչպես նաև համատեղ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, աշխատաժողովներ և վերապատրաստումներ:

Միջազգային համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են արտասահմանյան գործընկերների կողմից կազմակերպված ներքոնշյալ միջոցառումներին, այդ թվում նաև՝ Հայաստանի պատվիրակության կազմում.

- *Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության (ԲԿԳ) կողմից Մանիլայում կազմակերպված՝ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային համաժողովին*: Համաժողովի շրջանակներում Հանձնաժողովի ներկայացուցիչը մասնակցել է «Փոխգործելիություն և տվյալների օգտագործում» թեմայով պանելային քննարկմանը և ներկայացրել Հանձնաժողովի կողմից էլեկտրոնային հարթակի միջոցով հասանելի դարձած տվյալները, դրանց վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև առկա իրավական և գործնական մարտահրավերները: «Քաղաքականության մեջ գումարի թափանցիկության ապահովման ուղիները» թեմայով կայացած նիստին ներկայացրել է կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթը Հանձնաժողովին վերապահելուց ի վեր թվային լուծումների կիրառմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման, թափանցիկության և հաշվետվողականության ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:
- *Համաշխարհային բանկի կողմից Վաշինգտոնում կազմակերպված՝ «Համագործակցություններ հանուն կոռուպցիայի դեմ պայքարի» Գլոբալ ֆորում 2025-ին:* Ֆորումի շրջանակներում ներկայացվել են Հանձնաժողովի գործառույթների իրականացման ընթացքում առաջացած մարտահրավերները, ինչպես նաև՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործընթացը, օրենսդրական կարգավորումները, բարեվարքությունների ուսումնասիրությունների ինստիտուտը և Հանձնաժողովի գործառույթների թվայնացման գործընթացը:
- *Եվրոպայի խորհրդի «Լավ կառավարման գործընկերություն (PGG) III. Արևելյան գործընկերության տարածաշրջանում տնտեսական հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների ուժեղացում» ծրագրի շրջանակում Ստրասբուրգում կազմակերպված «Կոռուպցիոն ռիսկերի քարտեզագրում. քաղված դասեր և կիրառման հնարավորություններ» թեմայով աշխատաժողովին*: Աշխատաժողովի նպատակն էր նպաստել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման ոլորտում փորձի փոխանակմանը:
- *Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) նախաձեռնության կողմից Վիտորիա-Գաստեյզ քաղաքում կազմակերպված՝ Գլոբալ զազաթնաժողովին:* Հանդիպման ընթացքում ներկայացվել են Հայաստանում ԲԿԳ նախաձեռնության շրջանակում իրականացվող բարեփոխումները, մասնավորապես՝ պաշտոնատար անձանց հայտարարագրերի համակարգի կատարելագործման, իրական շահառուների բացահայտման, նվերների և պետական գնումների թափանցիկության, ինչպես նաև թվայնացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Միաժամանակ ներկայացվել են հայտարարագրերի էլեկտրոնային հարթակի զարգացման,

քաղաքական կուսակցություններին առնչվող տեղեկությունների հրապարակման թվային հարթակի գործարկման, ինչպես նաև բարեվարքության ուսումնասիրության ինստիտուտի ներդրման և վարքագծի կանոնագրքի կիրառման արդյունքում գրանցված ձեռքբերումներն ու պաշտոնատար անձանց վարքագծի փոփոխության միտումները:

- *«Արևելյան գործընկերության և Արևմտյան Բալկանների համայնքային երկխոսություն» խորագրով պանելային քննարկումներին, որոնք նույնպես անցկացվել են Վիտորիա-Գաստեյզ քաղաքում:* Քննարկման ընթացքում ներկայացվել են քաղաքական ֆինանսավորման սպառնալիքները, կոռուպցիայի ազդեցությունը մարդկության վրա, տեղական մակարդակում մասնակցայնության կարևորությունը, քաղաքացիական հասարակության դերը թափանցիկության և հաշվետվողականության ապահովման հարցում:
- *ՀՀ-ԵՄ Արդարադատության, ազատության և անվտանգության ենթակոմիտեի 14-րդ նիստին, որը կայացել է Բրյուսելում:* Նիստի ընթացքում ներկայացվել են դատավորների և դատախազների բարեվարքության ստուգման ուղղությամբ 2024 թվականին իրականացված աշխատանքների արդյունքները, ոլորտում առկա մարտահրավերները, ինչպես նաև բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության գործիքակազմի ներդրման գործընթացը: Ներկայացվել են նաև կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում ստանձնած պարտավորությունների, մասնավորապես՝ ՏՀԶԿ-ի և ԳՐԵԿՈ-ի կողմից ներկայացված հանձնարարականների կատարման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:
- *ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետությունների 11-րդ համաժողովին՝ Դոհայում կազմակերպված:* Համաժողովի ընթացքում «Դեպի քաղաքական ֆինանսավորման (կուսակցությունների ֆինանսավորման) թափանցիկություն» խորագրով պանելային քննարկմանը ներկայացվել է կուսակցությունների ֆինանսավորման վերահսկողությանն առնչվող արդի հիմնախնդիրները, ինչպես նաև վերջին տարիներին Հանձնաժողովի կողմից այս ոլորտում իրականացված աշխատանքները, առկա մարտահրավերները:

Հանձնաժողովը, հաշվետու տարվա ընթացքում, նաև իր մասնակցությունն է ունեցել.

- *Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի քննարկումներին*, որը վերաբերում էր Ծրագրի՝ Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույցով առկա հանձնառությունների կատարման ուղղությամբ ՀՀ-ի կողմից իրականացված աշխատանքներին և ձեռնարկված բարեփոխումներին:
- *ԵՄ/ԵԽ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» (PGG III) 2023–2027 թթ. ծրագրի՝ Հայաստանի դեկավար կոմիտեի երրորդ հանդիպմանը,* որտեղ առանձնահատուկ է եղել ԵՄ-ի և ԵԽ-ի հետ համագործակցությունը, նաև հանրային

ծառայության համակարգում վարքագծի կանոնների միասնականացման համար կատարված աշխատանքները, «Ներածություն կոռուպցիայի կանխարգելմանը» HELP առցանց դասընթացը:

- *«Թվային ժողովրդավարություն և թափանցիկ կառավարում» թեմայով պանելային քննարկմանը, որը կազմակերպվել էր «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն քարտուղարության և ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի հայաստանյան մասնաճյուղի (IFES) կողմից:* Քննարկմանը ներկայացվել էր Հանձնաժողովի կողմից կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության արդյունավետության բարձրացման համար իրականացվող թվայնացման գործընթացները:
- *Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հակակոռուպցիոն ցանցի 24-րդ լիագումար նիստին և Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի դեկավար խմբի 30-րդ հանդիպմանը:* Հանդիպման ընթացքում հաստատվել էր Հայաստանի առաջընթացի զեկույցը, որը ներկայացնում էր Ստամբուլյան գործողությունների ծրագրի՝ Հայաստանի գնահատման հինգերորդ փուլի շրջանակում վերջին տարիներին հակակոռուպցիոն հանձնառությունների իրականացման ընթացքը:
- *Ամենամյա «Ժողովրդավարության հայկական ֆորումին», որի ժամանակ* քննարկվել են Հայաստանում ժողովրդավարության առջև ծառացած մարտահրավերները, ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված բարեփոխումների ընթացքը: Ֆորումի ընթացքում կազմակերպված «Կուսակցությունների ֆինանսավորումն ու հիբրիդային վտանգներ ընտրությունների նախաշեմին» խորագրով պանելային քննարկման ընթացքում ներկայացվել է կուսակցությունների ֆինանսական վերահսկողության գործիքակազմերը, կուսակցություններին տրվող նվիրատվությունների կառավարման և հաշվետվության մեխանիզմները:

2025 թվականի ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել միջազգային մի շարք գործընկերների, մասնավորապես.

- *ՏՀԶԿ/ՍԻԳՄԱ ծրագրի՝ Հայաստանում պետական կառավարման սկզբունքների ուղղությամբ առաջընթացի գնահատման համար ժամանած ներկայացուցիչների հետ:* Հանդիպման շրջանակներում ներկայացվել է շահերի բախման, հայտարարագրման գործընթացին առնչվող իրավական կարգավորումները և Հանձնաժողովի կողմից կատարված գործողությունները:
- Եվրոպական միության հետ մուտքի արտոնագրերի ազատականացման առաջիկա գործողությունների ծրագրի շրջանակում հանրային անվտանգության, արտաքին հարաբերությունների և հիմնարար իրավունքների գնահատման շրջանակներում *ԵՄ փորձագիտական առաքելության ներկայացուցիչներին:* Հանդիպումները եղել

են տարվա ընթացքում երկու անգամ, որոնցից առաջինի ընթացքում ներկայացվել է Հանձնաժողովի գործունեությունը, ոլորտի ինստիտուցիոնալ գործիքակազմերը, իսկ երկրորդ հանդիպման ընթացքում՝ Հանձնաժողովի մանդատին առնչվող առանցքային հարցերը, ինչպես նաև անդրադարձել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում արձանագրված առաջընթացին ու Հանձնաժողովի գործունեությանը վերաբերելի վիճակագրական տվյալներին:

- *Ասիական զարգացման բանկի պատվիրակության ներկայացուցիչներին*: Հանդիպման ընթացքում ներկայացվել են կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրմանն առնչվող օրենսդրական փոփոխությունները և Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքները:
- Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գալագերի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Հանձնաժողովի լիազորությունները, ինչպես նաև քննարկվել Հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակը:

Միջազգային գործընկերների աջակցությամբ Հանձնաժողովը կազմակերպել է նաև մի շարք միջոցառումներ և վերապատրաստումներ.

- *Հանձնաժողովը և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) համատեղ կազմակերպել են «Քաղաքական բարեվարքություն և գենդերային հավասարություն քաղաքական կուսակցություններում» աշխատաժողովը*: Աշխատաժողովի ընթացքում ԺՀՄԻԳ ներկայացուցիչները ներկայացրել են կուսակցություններում վարքականոնների առնչությամբ միջազգային փորձը և առաջարկություններն ու ուղեցույցները՝ կուսակցությունների վարքականոնների, գենդերային աուդիտների և սեռերի ներկայացվածության վերաբերյալ:
- *«Հայաստանի արդարադատական բարեփոխումների աջակցման ծրագրի – Փուլ II» ծրագրի շրջանակներում Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի հետ համատեղ Հանձնաժողովը կազմակերպել է եռօրյա վերապատրաստում Հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացման նպատակով*, որի նպատակն էր զարգացնել և ամրապնդել Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունները, մասնավորապես՝ հանրային ծառայողների վարքագծի կանոնների կիրարկման, անհամատեղելիության սկզբունքների և օրենքով վերապահված այլ սահմանափակումների ոլորտներում: Ուսուցման ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ինտերակտիվ կերպով քննարկելու օրենսդրական ընթացակարգերը, միջազգային և տեղական լավագույն պրակտիկաները, շահերի բախման եւ նվերների ինստիտուտի իրավակարգավորումները և դրանց կիրառումը հանրային ծառայության մեջ:

2025 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է իր որդեգրած քաղաքականությունը՝ զարգացրելու և ամրապնդելու գործընկերային հարաբերությունները միջազգային կազմակերպությունների հետ: 2025 թվականին Հանձնաժողովը շարունակել է ակտիվ միջազգային համագործակցությունը՝ մասնակցելով միջազգային համաժողովների, աշխատաժողովների և բարձր մակարդակի քննարկումների, ինչպես նաև հյուրընկալել միջազգային գործընկերների պատվիրակություններ: Միջազգային հարթակներում ներկայացվել են կոռուպցիայի կանխարգելման, քաղաքական ֆինանսավորման վերահսկողության, հայտարարագրման համակարգի, բարեվարքության ուսումնասիրությունների և թվայնացման ուղղությամբ իրականացվող բարեփոխումները, արձանագրված առաջընթացն ու առկա մարտահրավերները: Միաժամանակ, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվել են վերապատրաստումներ և մասնագիտական միջոցառումներ՝ ուղղված Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, թափանցիկության, հաշվետվողականության և բարեվարքության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը:

## *11. ԱՄՓՈՓՈՒՄ*

Այսպիսով՝ Հաղորդմամբ ներկայացված՝ հաշվետու տարում իրականացված աշխատանքների արդյունքների և ներկայացված տվյալների ամփոփումը վկայում է, որ նախորդ տարիների համեմատությամբ էապես ավելացել է Հանձնաժողովի տարբեր գործառույթների և բարեվարքության համակարգի առանձին տարրերի վերաբերյալ հասցեագրվող դիմումների քանակը, ինչպես նաև դիմումների, հրապարակումների և օրենքով սահմանված այլ հիմքերի առկայությամբ Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունների թիվը:

Հաշվետու տարում Հանձնաժողովի աշխատանքներն, ի թիվս այնի, միտված են եղել համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց որոշումների կամ գործողությունների համատեքստում շահերի բախման իրավիճակների կառավարմանը և լուծմանը, ինչի շրջանակում Հանձնաժողովը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց տրամադրել է խորհրդատվական բնույթի պարզաբանումներ և առաջարկություններ՝ այդպիսով կանխարգելելով շահերի բախման փաստացի իրավիճակների առաջացումը: Վարքագծի կանոնների կիրառման միասնականության ապահովման շրջանակներում Հանձնաժողովը շարունակել է աջակցություն տրամադրել հանրային իշխանության մարմիններին՝ ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում, ինչպես նաև

զգալիորեն ավելացել է Հանձնաժողովի կողմից վարքագծի կանոններին վերաբերելի ուսումնասիրությունների և քննությունների քանակը՝ նպաստելով վարքագծի կանոնների կիրառման պրակտիկայի զարգացմանը: Զարգացել է նաև հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված ստացված նվերների հաշվառման և հանձնման պրակտիկան, իսկ հաշվառվող նվերների թիվը մի քանի անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Զգալիորեն աճել է բարեվարքության ուսումնասիրություն անցնող անձանց քանակը, ինչի արդյունքում Հանձնաժողովը հնարավորություն է ունեցել կանխարգելելու բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց առավել մեծ քանակի անձանց մուտքը դատահիրավական համակարգը: Այդուհանդերձ, նախորդ տարվա համեմատությամբ ուսումնասիրությունների քանակի կրկնակի աճը՝ համադրված Հանձնաժողովի ռեսուրսների սահմանափակ լինելու հետ, որոշ դեպքերում խոչընդոտներ է ստեղծել օրենքով սահմանված կարճ ժամկետներում եզրակացություններ տրամադրելու համար:

Հանձնաժողովը, կարևորելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների, ինչպես նաև հանրության տարբեր հատվածների ներկայացուցիչների՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը, հաշվետու տարում իրականացրել է հանրային իրազեկման միջոցառումներ և լայնածավալ վերապատրաստումներ, որոնց զգալի մասն անց է կացվել Հանձնաժողովի կողմից գործարկված կրթական առցանց հարթակի միջոցով:

Հանձնաժողովի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է գտնվել կուսակցությունների ֆինանսական գործունեության թափանցիկության ապահովումը և դրա նկատմամբ օրենքով սահմանված վերահսկողության իրականացումը: Այս շրջանակում մեծացել է համապատասխան ստուգումների ծավալը և դրանց արդյունքում հարուցված վարույթների քանակը: Թեև արձանագրվել է կուսակցությունների ֆինանսական վարքագծի դրական տեղաշարժ, այնուամենայնիվ, շարունակում են արդիական մնալ ստվերային ֆինանսավորման ռիսկերը և կանխիկի շրջանառության հետ կապված հիմնախնդիրները:

Միաժամանակ, հայտարարագրերի ստուգման և վերլուծության ընթացակարգերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ակտիվորեն գործարկվել են պետական այլ իրավասու գերատեսչությունների հետ համագործակցության ինստիտուցիոնալ կառուցակարգերը, ինչպես նաև իրականացվել են հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդիականացմանն ու վերլուծական նոր գործիքակազմի ներդրմանն ուղղված աշխատանքներ:

Մի շարք օրենսդրական նախաձեռնություններով Հանձնաժողովին են վերապահվել նոր լիազորություններ, որոնց ներդրման և գործնականում կիրառման արդյունքում Հանձնաժողովի կանխարգելիչ մանդատի ազդեցությունն առավել տեսանելի կդառնա:

Չնայած գրանցված ձեռքբերումներին՝ շարունակել են առկա լինել նախկինում արձանագրված մարտահրավերները՝ կապված Հանձնաժողովի լիազորությունների և իրականացվող աշխատանքի ծավալների աճին Հանձնաժողովի ռեսուրսների անհամապատասխանության, այդ թվում՝ կատարված աշխատանքի ծավալի, բովանդակության և վարձատրության անհամարժեքության հետ: Պահպանվել են աշխատակազմի կադրային բարձր հոսունությունը և մասնագիտական պաշտոնների համալրման էական բարդությունները: